



Kingdom of the Netherlands

«NEW GENERATION»
Humanitarian Non-Governmental
Organization



«ՆՈՐ ՍԵՐՈՆԵՂ»
Մարդասիրական Հասարակական
Կազմակերպություն

COUNTERPART
INTERNATIONAL



**ՀՀ ՕՐԵՆՍԴԻՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՎ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ԼԳՔՏ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ**

2 Ե 4 ՈՒ 3 Ց

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՈՒՆ
ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ**

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՈՒՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ

ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ

2 Ե 4 ՈՒ Յ Ց



Kingdom of the Netherlands

«NEW GENERATION»
Humanitarian Non-Governmental
Organization



«ՆՈՐ ՍԵՐՈՆԳ»
Մարդասիրական Հասարակական
Կազմակերպություն

COUNTERPART
INTERNATIONAL



Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից և Նիդեռլանդների Արտաքին գործերի նախարարության Մատրա ծրագրի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Շարժվելով առաջ. Հայաստանում քաղաքացիական հասարակության կարողությունների ամրապնդում» ծրագրի շրջանակում «Նոր Սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպության միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին՝ «Նոր Սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպությանը և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության և Նիդեռլանդների թագավորության կառավարության տեսակետների հետ:

«Նոր Սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպությունը 2014թ.ապրիլ-հունիս ամիսների ընթացքում Քաունթերփարթ ինթերնեյշնլի հայաստանյան մասնաճյուղի ֆինանսավորմամբ ուսումնասիրել է ԼԳԲՏ անձանց իրավունքների վերաբերյալ ՀՀ ներպետական օրենսդրությունը և միջազգային ակտերով ստանձնած պարտավորությունները, համեմատություններ անցկացրել այլ երկրների փորձի հետ: Ուսումնասիրության հիմնական ոլորտներն են՝

- Նույնասեռականության ապաքրեականացումը
- Ատելության խոսքը՝ ուղղված ԼԳԲՏ անձանց նկատմամբ
- Նույնասեռական ամուսնության իրավունքը
- Կենսաբանական սեռը փոխելու իրավունքը
- Առողջապահության ոլորտում ծառայությունների մատչելիության իրավունքը
- ԼԳԲՏ անձանց իրավունքները քրեակատարողական հիմնարկներում

Աշխարհի գրեթե բոլոր երկրներում ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության ձևավորման ընթացքում ԼԳԲՏ անձանց շարժումը և հավասար իրավունքների պայքարը միշտ եղել է կարևորագույն խնդիր: Գրեթե բոլոր հասարակություններում հավասար իրավունքների գաղափարը և բազմազանության տարածումը դեմ է առնում դժվարությունների և անհանդուրժողականության: Սեռական կողմնորոշման կարծրատիպերի երկար գոյությունը և ավանդական «ստանդարտները» բնորոշ օրինաչափություններ են ընտանիքներում, որն էլ խնդիր է ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության համար:

Ինչպես նախկին խորհրդային այլ պետություններում, Հայաստանում նույնպես ԼԳԲՏ անձանց իրավունքները ոտնահարվում են: Վերջիններս հանդիսանում են խարանի և խտրականության թիրախ: Դրա մասին է վկայում նաև վերջերս ՀՀ ոստիկանության կողմից «Վարչական իրավախախտումների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին առաջարկը. այն է՝ «Ոչ ավանդական սեռական հարաբերությունների քարոզչություն»-ը, հոդված 47.8: Թեև օրենքի նախագիծը հետ է կանչվել և հանվել քննարկումից, այնուամենայնիվ ոստիկանության կողմից կատարված այս քայլը արդեն իսկ խոսում է թիրախային դարձած անձանց նկատմամբ հավանական սպառնալիքների առկայության մասին, որը պետք է կարգավորվի օրենքով: Իսկ այս պարագայում, եթե ոչ ուղղակի, ապա գոնե անուղղակիորեն թիրախ է դառնում ԼԳԲՏ համայնքը: ԼԳԲՏ անձանց հետ կապված խնդիրներն ավելի սուր դրսևորում ունեն ՀՀ մարզերում, որոնք դեռ պատրաստ չեն կոտրելու կարծրատիպերը և ընդունել նրանց որպես հասարակության լիարժեք անդամներ:

Նույն խնդիրը առկա է նաև հայկական ՋԼՄ-ում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՋԼՄ-ներն են պատասխանատու որոշակի ժամանակահատվածում

հասարակական կարծիքի ձևավորման համար, վերջիններիս ներգրավվածությունը ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրների տարածմանը կարող է որակավորվել որպես հակաքարոզչություն և զրպարտանք:

Կարևոր է նաև ընդգծել, որ իրավապաշտպան կազմակերպությունների մեծամասնությունը մարզերում հանձն չի առնում պատասխանատվություն վերցնել պաշտպանելու ԼԳԲՏ անձանց իրավունքները՝ վախենալով կորցնել վարկանիշը:

Մինչ ոլորտի խնդիրներին անդրադառնալը պետք է նշել, որ ԼԳԲՏ անձանց բնորոշող հասկացությունների պարզաբանման կարիք նույնպես կա:

Հ Ա Ս Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ԼԳԲՏ	Հապավում է՝ կազմված Լեսբուհի, Գեյ, Բիսեքսուալ և Տրանսգենդեր (Lesbian, Gay, Bisexual և Transgender) բառերի սկզբնատառերից:
Լեսբուհի	Բառի ծագումը առաջացել է հին Հունաստանի Լեսբոս կղզու բնակիչների շնորհիվ: Այն նշանակում է կին, ով զգայական և ֆիզիկական նախասիրություն ունի այլ կնոջ նպատամբ: Բնորոշվում է անձի մշտական հուզական, զգայական, զգացմունքային և սեքսուալ հակումով դեպի իր սեռի ներկայացուցիչները:
Գեյ	Բնորոշվում է անձի մշտական հուզական, զգայական, զգացմունքային և սեքսուալ հակումով դեպի իր սեռի ներկայացուցիչները:
Բիսեքսուալ	Երկսեռ կամ բիսեքսուալ անձ, ով զգայական և ֆիզիկական նախասիրություն ունի դեպի նույն և հակառակ սեռի ներկայացուցիչները: Բնորոշվում է անձի մշտական հուզական, զգայական, զգացմունքային և սեքսուալ հակումով դեպի ն՝ իր սեռի, և՛ հակառակ սեռի ներկայացուցիչները:
Տրանսգենդեր	Այն անձինք, ովքեր չեն ընկալում իրենց որպես այն սեռի ներկայացուցիչ, որը նրանք ունեն ի ծնե: Նրանք կարող են լինել տղամարդիկ, ովքեր կանացի արտաքին ունեն կամ կանայք, ովքեր տղամարդու արտաքին ունեն:
Հետերոսեքսուալ	Բնորոշվում է անձի մշտական հուզական, զգայական, զգացմունքային և սեքսուալ հակումով դեպի հակառակ սեռի ներկայացուցիչները:
Հոմոսեքսուալ (նույնասեռական անձ)	Այս բառը ձևավորվել է հունարեն «հոմոս» բառից, որը նշանակում է «հավասար, նույն», որը չպետք է շփոթել լատիներեն «հոմո» բառի հետ, որը նշանակում է մարդ արարած: Այն բնորոշում է մարդկանց, ովքեր ունեն հուզական և սեռական հակում դեպի նույն սեռի ներկայացուցիչները:
Ինտերսեքս	Անձ, ում մոտ միաժամանակ զարգանում են և՛ տղամարդու, և՛ կնոջ կենսաբանական օրգաններ (առաջնային եւ երկրորդային սեռական հատկանիշներ):
SUS	«Տղամարդիկ, ովքեր սեռական հարաբերություն են ունեն տղամարդկանց հետ» բառակազմության հապավումն է: Այստեղ կարևոր չէ, թե ունենում են նրանք սեռական հարաբերություններ կանանց հետ կամ համարում են իրենց գեյ կամ բիսեքսուալ:
ԿՍԿ	«Կանայք, ովքեր սեռական հարաբերություն ունեն կանանց հետ» բառակազմության հապավում է: Այստեղ կարևոր չէ, թե ունենում են նրանք սեռական հարաբերություններ տղամարդկանց հետ կամ համարում են իրենց լեսբուհի կամ բիսեքսուալ: Այս տերմինը կարևոր է, քանի որ նրանց հիմնական մասը համարում է իրեն հետերոսեքսուալ, սակայն սեռական հարաբերություններ են ունենում այլ կանանց հետ:
Տրանսֆորիա	Վախի, մերժման կամ թշնամական վերաբերմունքի /հաճախ խտրականության և խարանի տեսքով/ դրսևորումն է տրանսսեքսուալների, տրանսգենդերների և տրանսվեստիտների նկատմամբ:

Տրանսվեստիտ	Անձ, ով հակառակ սեռի ներկայացուցչի հագուստ է կրում, որպեսզի ժամանակավոր հակառակ սեռի պատկանելիության զգացում ունենա: Պարտադիր չէ, որ նա սեռը փոխելու կամ վիրահատական միջամտության ցանկություն ունենան:
Տրանսսեքսուալ	Անձ, ով գտնվում է վիրահատական միջամտության կամ հորմոնալ բուժման ընթացքում կամ ենթարկվել է վիրահատական միջամտության և/կամ անցել է հորմոնալ բուժման կուրս, որպեսզի մարմնին տա համապատասխան սեռի հատկանիշներ:
Հոմոֆոբիա	(ծագումը հին հուն. հոմոս` նման, նմանատիպ և ֆոբոս` վախ բառերից), բացասական վերաբերմունք կամ թշնամանք է նույնասեռականության դրսևորման տարբեր ձևերի, ինչպես նաև դրա հետ կապված հասարակական երևույթների նկատմամբ:
Բիֆոբիա	(ծագումը` բի` երկու և հին հուն. ֆոբոս` վախ բառերից) Այն նշանակում է ոչ թե ֆոբիա/վախ կլինիկական իմաստով, այլ թշնամանք և խտրական վերաբերմունք բիսեքսուալ կողմնորոշում ունեցող անձանց նկատմամբ:
<p>2003թ. ուժի մեջ է մտնում և մինչև 2013թ. ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ և 140-րդ հոդվածներում օգտագործվում «համասեռամոլություն» եզրույթը, որը կազմված է համասեռ /նույն սեռի, նույն տեսակի/ և մոլուցք բառերից: Այս եզրույթը մինչև 1990թ. համարվում էր հոգեկան հիվանդություն, սակայն 1990թ. մայիսի 17-ին Առողջապահության միջազգային կազմակերպության Գլխավոր ասամբլեան նույնասեռականությունը հանեց հոգեկան հիվանդությունների շարքից:</p>	

1991թ. անկախության հռչակումից հետո, երբ Հայաստանը փորձում էր ինտեգրվել միջազգային հանրությանը, ստորագրվեցին մի շարք միջազգային փաստաթղթեր, որոնք կոչ էին անում հարգել **մարդու իրավունքները**, բոլոր մարդկանց վերաբերվել հավասարապես, առանց որևէ խտրականության: Քանի որ խտրականության կանխարգելումը ինքնին նախատեսում էր պատասխանատվություն նշված նորմի խախտման համար, ուստի 2013թ. ՀՀ մարդու իրավունքերի պաշտպանի աշխատակազմը մշակեց **«Խտրականության դեմ»** ՀՀ օրենք, որը սակայն չընդունվեց միայն այն պատճառով, որ պատասխանատվություն էր սահմանում **ԼԳԲՏ** անձանց նկատմամբ նրանց սեռական կողմնորոշման հիմքով խտրական վերաբերմունք ցուցաբերելու համար: Սակայն պետք է նշենք, որ Հայաստանում պատահական չէ, որ հանրության և պետական մարմինների և հատկապես ԶԼՄ-ների ճնշումները թույլ չտվեցին օրենքի ընդունմանը, քանի որ մինչև 2003թ. նույնասեռականությունը, որը վերնագրված էր «համասեռամոլություն» տերմինով, քրեորեն հետապնդելի արարք էր համարվում: Այն ավելի շատ Խորհրդային Միության գոյության ժամանակներից եկած մտածելակերպ էր, որը իր ազդեցությունն էր թողել արդեն իսկ անկախ և մի շարք միջազգային փաստաթղթեր վավերացրած ՀՀ-ի վրա¹: Նույնասեռականության քրեականացումը գալիս է դեռ խորհրդային ժամանակներից: Թեև 1920-1936 թվականներին **Խորհրդային Հայաստանի Քրեական** օրենսգրքով նույնասեռականությունը չի պատժվում, սակայն 1936 թվականին ՀՀ օրենսգրքում ավելացվում է արվամոլությունը քրեորեն դատապարտող 116-րդ հոդվածը, որից հետո 01.07.1961թ-ից մինչև 18.04.2003թ. **Հայաստանում** գործում է Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված քրեական օրենսգրքիքը: Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության 1969թ. հոկտեմբերի 29-ի հրամանագրի խմբագրությամբ - **ՀՍՍՀԳՍ**, 1969թ., N 21, 155-րդ հոդվածի հիման վրա ընդունվում է 116-րդ հոդվածը. այն է «արվամոլություն», որն ունեցել է հետևյալ բովանդակությունը, տառացի մեջբերում հոդվածից. «Տղամարդու սեռական հարաբերությունը տղամարդու հետ (արվամոլություն) պատժվում է ազատազրկմամբ մինչև հինգ տարի ժամանակով: Արվամոլությունը, եթե կատարվել է ֆիզիկական բռնություն սպառնալիքներ գործածելով կամ անչափահասի նկատմամբ կամ տուժողի կախյալ վիճակն օգտագործելով, պատժվում է ազատազրկմամբ երեքից մինչև յոթ տարի ժամանակով:

¹Եվրոպական կոնվենցիա «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին», ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր բռնակազմի, ՄԱԿ-ի հռչակագիր «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության» վերաբերյալ, ԵՄ դեկլարացիա նվիրված «Հումֆրիայի դեմ պայքարի միջազգային օրվան», ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում Գիեննայի դեկլարացիայի և գործողությունների ծրագրի քննման և իրականացման ԵՄ հռչակագիր, ԵՆԽՎ բանաձև՝ ուղղված «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա խտրականությանը», ԵՆ Նախարարների կոմիտեի հանձնարարականները անդամ պետություններին սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիման վրա խտրականության վերացման միջոցների վերաբերյալ:

Ինչպես երևում է նույնասեռականությունը, որը անվանվել է «արվամոլություն», Հայաստանում տարբեր ժամանակահատվածներում քրեորեն պատժելի արարք է համարվել: Հողվածի տառացի մեկնաբանությունից երևում է, որ Հայաստանում քրեորեն պատժելի արարք է համարվել միայն տղամարդու սեռական հարաբերությունը տղամարդու հետ քանի որ այստեղ որևէ նշում չկա լեսբուհիների սեռական հարաբերությունների քրեորեն արգելված արարք համարվելու մասին: Այնուամենայնիվ, նշված հողվածը վերանվանվում է «համասեռամոլության» և ընդգրկվում 01.08.2013թ. ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 139 և 140-րդ հողվածներում, որոնք ունեցել են հետևյալ բովանդակությունը, տառացի մեջբերում հողվածներից. ՀՀ քրեական օրենսգրքի 139 հողված «1. **Համասեռամոլությունը** կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները տուժողի կամքին հակառակ վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով`...», 140-րդ հողված «Անձին սեռական հարաբերության, **համասեռամոլության** կամ սեքսուալ բնույթի այլ գործողություններ կատարելուն հարկադրելը շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով`....»:

Այնուհետև 12.11.13թ. ՀՕ-112-Ն օրենքի հիման վրա փոփոխություն կատարվեց վերոնշյալ հողվածներում և «համասեռամոլ» բառը նախ փոխարինվեց «*համասեռ գործողություն*» տերմինով, ապա «համասեռամոլությունը» ապաքրեականացվեց:

ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հողվածի համաձայն սեքսուալ բնույթի, այդ թվում **համասեռական գործողությունները** տուժողի կամքին հակառակ վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով`....

ՀՀ քրեական օրենսգրքի 140-րդ հողվածի համաձայն` անձին սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի, այդ թվում` **համասեռական գործողություններ** կատարելուն հարկադրելը շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով, եթե բացակայում են սույն օրենսգրքի 132-րդ և 132.2-րդ հողվածներով նախատեսված հանցագործությունների հատկանիշները`

Հաշվի առնելով, որ «համասեռ» բառը նշանակում է նույն սեռի, նույն տեսակի գործողություն, ինչպես նաև սեքսուալ բնույթի բռնի գործողությունները բացառում են տղամարդ-կին սեռական ոչ բնական ճանապարհով կատարվող գործողությունները, ապա նույնասեռ անձի կողմից կատարվող սեռական ակտը ընդգրկվում է այդ գործողությունների մեջ, «հետևաբար համասեռ գործողություններ» տերմինի օգտագործումը ոչ միայն ճիշտ չէ, այլև նպատակահարմար չէ, քանի որ դրանով կրկնակի անգամ ընդգծվում է նույնասեռ անձը` որպես կատարող:

Սակայն, նույնասեռական անձանց հարաբերությունները ապաքրեականացնելը խնդիր է ոչ միայն ՀՀ-ի նման նոր զարգացող պետության համար, այլ աշխարհի շատ պետությունների համար, որոնց կառավարությունները որպես իրավաստեղծ մարմիններ են հանդես եկել մարդու իրավունքների ոլորտում հիմնաքարային փաստաթղթեր ստեղծելիս: Դրանցից են **ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան:**

2014թ. դրությամբ նույնասեռական չափահաս (յուրաքանչյուր դեպքում նշվում է չափահաս եզրույթը, քանի որ երեխաները համարվում են խոցելի խումբ և ունեն հատուկ պաշտպանության կարիք) անձանց հարաբերությունները թույլատրելի են **ՄԱԿ-ի 115 անդամ պետություններում:** Վերջին պետությունը Հյուսիսային Կիպրոսն է, որի խորհրդարանը 27 հունվարի 2014թ. ապաքրեականացրեց նույնասեռական սղամարդկանց հարաբերությունները մեկ այլ **տղամարդկանց** հետ: Միայն վերջերս **Կիպրոսի** նույնասեռականության ապաքրեականացման մասին օրենքի ընդունումը պատահական չէր, քանի որ շատ պետությունների նման օրենսդրական նորմերը հիմնված են եղել սովյալ պետության կրոնական համոզմունքների վրա: Այս հարցի վերաբերյալ **Կիպրոսի** դիրքորոշումը ընդգծվում է շատ պետությունների օրենսդրական բարեփոխումների համար հիմք հանդիսացած **Դադջեն ընդդեմ Մեծ Բրիտանիայի**² նախադեպային գործով, որտեղ **Կիպրոսի** ներկայացուցիչը նույնասեռականության քրեականացումը **Իռլանդիայի** կառավարության կողմից խախտում չի համարել, քանի որ ըստ նրա **Կիպրոսն ու Իռլանդիան** կրոնական համոզմունքներին և բարոյական նորմերին հավատարիմ երկրներ են, իսկ եվրոպական որևէ հասկացություն բարոյականության վերաբերյալ գոյություն չունի: Նա նույնասեռականությունը դիտարկել է կրոնի և բարոյական նորմերի լույսի ներքո և գտել, որ պետությունները իրավունքները սահմանափակելիս ավելի լավ գիտեն, թե իրենց օրենսդրությունը բարոյական ինչպիսի նորմեր պետք է պարունակի:

Սակայն դեռ կան երկրներ, որոնց օրենսդրությունները նույնասեռական անձանց դատապարտում են ազատազրկման: Այդ երկրների ցանկում հիմնականում մահմեդական պետություններն են և **Աֆրիկայի** երկրների մեծ մասը: Ավելին, որոշ երկրներում գոյություն ունեն օրենքներ, որոնք թույլ են տալիս նույնասեռականներին մահապատժի ենթարկել **/Իրան, Եմեն, Մավրիտանիա, Սաուդյան Արաբիա, Սուդան/:** Դրությունը **Իրաքում** և **Հնդկաստանում** դեռ վիճելի է, որին կանդրադառնանք ստորև:

Հնդկաստանի 1861թ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածը նախատեսում էր մինչև 10 տարվա ազատազրկում **«ոչ բնական հանցագործության»** համար, այդ թվում նաև չափահաս նույնասեռական անձանց կամավոր հարաբերությունների համար: **2009թ-**ին **Դելիի Բարձր** դատարանը չեղյալ է հայտարարել վերոնշված հոդվածը և նշել, որ այն խախտում է մարդկանց հավասար լինելու իրավունքը և խտրական վերաբերմունք է

²[Dudgeon v. the United Kingdom \(no. 7525/76\)](#)22.10.1981

սահմանում: Դատարանի որոշումը բողոքարկվել է **Գերագույն** դատարանում, որը **11.12.2013թ.** բեկանել և փոփոխել է **Դելիի Բարձր** դատարանի որոշումը և նշել, որ դատարանը չարաշահել է իր լիազորությունները: Դատավճռի համաձայն նույնասեռականությունը **Հնդկաստանում** սահմանվել է որպես **«սեռական ակտ, որը հակասում է իրերի բնական կանոններին»**: Սակայն **Հնդկաստանի** կառավարությանն առաջարկել է ընդունել օրենսդրություն, որը կնախատեսի նշված հոդվածի ուժը կորցնելու մասին դրույթ:

2003թ. ԱՄՆ-ի գործերի **Իրաք** ներխուժումից հետո երկրում նորից սկսել է գործել **1969թ. Քրեական** օրենսգիրքը, որը ապաքրեականացնում էր նույնասեռական հարաբերությունները: Սակայն մահապատիժը և այլ պատիժները շարունակում են իրագործվել **շարիաթի** ինքնահռչակ դատավորների կողմից:

Այնուամենայնիվ ինչպես **Հայաստանը**, այնպես էլ **Իրաքը** ստորագրել են հուշագիր **ԼԳՖՏԻՔ** (լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրանս, ինտերսեքս, քուիր) անձանց իրավական և սոցիալական կարգավիճակի համատեղ բարելավման նպատակով: **Իրաքը** մասնավորապես դատապարտել է քրեական և անձնական օրենքների օգտագործումը **ոչ ավանդական սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը Իրաքում** քրեականացնելը, և **Իրաքի ԼԳՖՏԻՔ** անձանց իրավունքների սխալ կիրառումը՝ արտաքին միջամտություն և մշակույթն ու ժողովրդին վնասելու միջոց մեկնաբանելով: Նման հուշագրի ստորագրումը ավելի շատ խոսում է **ԱՄՆ-ի** ազդեցության մասին, քանի որ **Իրաքը** մահմեդականություն դավանող երկիր է, իսկ մահմեդական պետությունների օրենսդրությունները ուսումնասիրելիս, պարզ է դառնում, որ **Իսլամը** և **Շարիաթը** որոշակի առումով գլխավոր օրենքի դեր են կատարում: Այնտեղ նշված է, որ **«ոչ մի օրենք չպետք է հակասի Շարիաթի սկզբունքներին»**: Այդ է պատճառը, որ **1990թ. օգոստոսի 5-ին Կահիրեում** ընդունվել է **«Մարդու իրավունքների իսլամական հռչակագիրը»**:

Եթե համեմատություն անցկացնենք **ԼԳՖՏ** անձանց իրավունքների վերաբերյալ պետությունների դիրքորոշումների միջև, ապա պետք է նշել, որ արևմտյան երկրները ավելի հանդուրժող են, քան արևելյան երկրները, թեև այն ուղղակիորեն կապված է երկրների դավանած կրոնի հետ: **Մահմեդական** երկրները ավելի անհանդուրժող են և նույնասեռ անձանց ոչ միայն ենթարկում են որոշակի ժամկետով ազատազրկման, այլև կան երկրներ որտեղ նախատեսված է մահապատիժ: Սակայն նույն հանդուրժող **արևմտյան երկրներն** էլ ետ չեն մնում **արևելյան երկրներից** և միայն բազմաթիվ դատական գործերի արդյունքում են փոխում իրենց օրենսդրությունը և ապաքրեականացնում նույնասեռական անձանց հարաբերությունները:

Մարդու իրավունքների հիմնաքար համարվող **ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հայրենիք համարվող ԱՄՆ-ը**, որը դեռևս **1948թ.** հռչակում էր, որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար, քրեական պատիժ էր սահմանում միայն նույնասեռական տղամարդկանց համար, որը հետագայում դատական գործերի արդյունքում ապաքրեականացվեց: Նշված օրենքի համար հիմք հանդիսացավ **Լոուրենս**

ընդդեմ Տեխասի գործը³: Դիմումատուները 1998թ. ձերբակալվել էին իրենց բնակարանում սեռական ակտ ունենալու ժամանակ, ամբողջ գիշեր անցկացրել բանտում և առավոտյան գրավով ազատ արձակվել, որից հետո **Տեխասի** օրենսդրությամբ սահմանված կարգով նրանցից յուրաքանչյուրը տուգանվել էր 125 դոլարով: Դիմումատուները հայց էին ներկայացրել **Խարիսի** շրջանի քրեական դատարան և գտել, որ իրենց նկատմամբ կիրառված տուգանքերը հակասում են **ԱՄՆ-ի Սահմանադրության 14 փոփոխությանը**, որը սահմանում է, որ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առաջ: Այն օրենքը, որի հիման վրա նրանք տուգանվել էին, արգելում էր սեռական հարաբերությունները միայն տղամարդկանց միջև: Սակայն **Դատարանը** մերժեց նրանց հայցը և ավելացրեց տուգանքի չափը՝ այն սահմանելով 142.25 դոլար յուրաքանչյուրի համար: **1999թ.** Դիմումատուները դիմեցին **Տեխասի 14-րդ շրջանի վերաքննիչ դատարան**: Բողոքի հիմքը **օրենքի առաջ հավասարության և անձնական կյանքի անձեռնմխելիության սկզբունքներն էին**: Վերաքննիչ դատարանը նույնպես մերժեց նրանց բողոքը: **2001թ.** դիմումատուները նորից դիմեցին **Տեխասի** քրեական գործերով դատարան, որտեղ նույնպես մերժվեց նրանց բողոքը: **2002թ-**ին դիմումատուները դիմեցին **ԱՄՆ-ի Գերագույն Դատարան**, որտեղ սակայն նույն հանգամանքներով գործ **1986թ.** արդեն իսկ քննվել էր: Դա **Բուլերսն ընդդեմ Հարդվիկայի**⁴ գործն էր: Այս գործով դատարանը նույնասեռականացումը քրեորեն արգելված արարք համարող օրենքը ուժի մեջ էր թողել: Թեև **Լուուրենսի** գործը իր փաստական հանգամանքերով ամբողջովին նման էր **Բուլերսն ընդդեմ Հարդվիկայի** գործին, սակայն **2003թ-ի հունիսի 26-ին** դատարանը **Տեխասի** օրենքը ուժը կորցրած ճանաչեց: Դատարանը գտել էր, որ օրենքը հակասում է և խախտում **ԱՄՆ-ի Սահմանադրությամբ** երաշխավորված **անձնական կյանքի իրավունքը**: Հատկանշական է, որ **Գերագույն Դատարանի** դատավոր **Քենեդին** հղում է կատարել **Դադջեն ընդդեմ Մեծ Բրիտանիայի** գործին, որը քննվել է **ՄԻԵԴ-ի** կողմից **1981թ.**: **ՄԻԵԴ-ը** նշված գործով **Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի** խախտում էր արձանագրել, քանի որ նույնասեռ անձանց համաձայնությամբ սեռական հարաբերություններ ունենալու հիմքով քրեական հետապնդումը խախտում է անձի անձնական կյանքի իրավունքը: **Լուուրենսի** գործով դատավորը նշում էր, որ **Բուլերսն ընդդեմ Հարդվիկայի** գործը սխալ էր այն ժամանակ եւ սխալ է մնում մինչև այսօր: Քանի որ չափահաս անձանց համաձայնությամբ սեռական հարաբերությունները նրանց անձնական կյանքի անբաժանելի մասն են համարվում եւ պետք է պաշտպանվեն **ԱՄՆ Սահմանադրության 14-րդ հոդվածով**:

Թեև **ԱՄՆ-ի** համար **Դադջեն ընդդեմ Մեծ Բրիտանիայի** գործը նախադեպային և օրենսդրական բարեփոխումների հիմք դարձավ, սակայն **Միացյալ Թագավորության** դեմ դա միակ գործը չէր, որ պետք է քննվեր **ՄԻԵԴ-ի** կողմից: **ԲիԲԻ-ին ընդդեմ Միացյալ Թագավորության** 5 գործով դիմողի նկատմամբ քրեական գործ էր հարուցվել մինչև 16

³ *Lawrence v. Texas*, 539 U.S. 558 (2003),

⁴ *Bowers v. Hardwick*, 478 U.S.186 (1986)

⁵ *B.B. v. the United Kingdom* (no. 53760/00)10.02.2004

տարեկան անձի հետ սեռական հարաբերություն ունենալու հիմքով: 1998-1999թթ. գործող օրենսդրության համաձայն նույնասեռ տղամարդկանց սեռական հարաբերությունները մինչև 18 տարեկան տղամարդկանց հետ քրեորեն պատժելի է համարվել, իսկ այլ սեռի անձանց հետ՝ մինչև 16 տարեկան: Նշված գործով ՄԻԵԴ-ը **Կոնվենցիայի 14-րդ և 8-րդ հոդվածների** խախտում է ճանաչել:

ՄԻԵԴ-ի կողմից ընդդեմ Միացյալ Թագավորության ևս մեկ գործ է քննվել նույն հիմքով, որը սակայն հանվել է քննվող գործերի ցուցակից նոր օրենքի ընդունումից հետո, որով միննույն տարիքն է սահմանել և՛ միասեռ, և՛ տարբեր սեռերի սեռական հարաբերությունների համար (**Շուտերլանդը ընդդեմ Միացյալ Թագավորության**)⁶: Չնայած նշված **ՄԻԵԴ**-ի որոշումների առկայությանը, առ այսօր Եվրոպական դատարանը շարունակում է քննել Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտման հիմքով բերված բողոքներ: ՄԻԵԴ-ի կողմից քննված գործերը հիմնականում պարունակել են **Կոնվենցիայի 8-րդ հոդվածի** խախտում: Դրանք են **Դադջենն ընդդեմ Միացյալ Թագավորության, Նորիսն ընդդեմ Իռլանդիայի**⁷, **Մոդինոսն ընդդեմ Կիպրոսի**⁸, **Էյ Դի Թին ընդդեմ Միացյալ Թագավորության**⁹ գործերը: Նշված գործերով քրեական պատասխանատվություն էր նախատեսվում նույնասեռ անձնաց հետ հարաբերություններ ունենալու համար: **ՄԻԵԴ**-ի կողմից քննված գործերը չեն սահմանափակվել միայն **Կոնվենցիայի 8-րդ հոդվածով**: Դրանք պարունակել են նաև **Կոնվենցիայի 14-րդ հոդվածի** խախտում: **Էլ-ն և Վի-ն ընդդեմ Ավստրիայի և Էս Էլ-ն ընդդեմ Ավստրիայի**¹⁰ գործերով դիմողները դատապարտվել էին ազատազրկման 14-18 տարեկան անձանց հետ հարաբերություններ ունենալու համար: **Ավստրիայի** օրենսդրությունը քրեական պատասխանատվություն է նախատեսում միայն նույնասեռ մեծահասակ տղամարդկանց և 14-18 տարեկան դեռահաս տղամարդկանց հարաբերությունների համար, բայց ոչ նույն տարիքի դեռահաս կանանց հետ հարաբերություններ ունենալու համար: Նշված գործերով **ՄԻԵԴ-ը Կոնվենցիայի 14 /խտրականության արգելք/ և 8-րդ /մասնավոր և ընտանեկան կյանքի հարգանքի իրավունք/ հոդվածների** համատեղ խախտում ճանաչեց:

Թեև **ՄԻԵԴ**-ը նմանատիպ գործերով արդեն իսկ իր որոշումներում ճանաչել է **Կոնվենցիայի 8-րդ հոդվածի** խախտում, սակայն **Ավստրիայի** դեմ շարունակվում են բողոքների ներկայացումը: Մասնավորապես **Ֆի Ջի-ն ընդդեմ Ավստրիայի, Ի Բի-ին ընդդեմ Ավստրիայի, Էյջ Ջի-ին ընդդեմ Ավստրիայի**¹¹ գործերով դիմողները նշում էին, որ ոստիկանությունը շարունակում է պահել այնպիսի նյութեր, որոնք թեև ձեռք էին բերվել օրենքով սահմանված կարգով, սակայն **Էլ-ն և Վի-ն ընդդեմ Ավստրիայի և Էս Էլ-ն**

⁶[Sutherland v. the United Kingdom \(no. 25186/94\)](#), 27.03.2001

⁷[Norris v. Ireland \(no. 8225/78\)](#) 26.10.1988

⁸[Modinos v. Cyprus \(no. 15070/89\)](#) 22.04.1993

⁹[A.D.T. v. the United Kingdom \(no. 35765/97\)](#) 31.07.2000

¹⁰[L. and V. v. Austria \(nos. 39392/98 and 39829/98\) and S.L. v. Austria \(no. 45330/99\)](#) 09.01.2003թ.

¹¹[F.J. v. Austria \(no. 2362/08\), E.B. v. Austria \(no. 26271/08\), H.G. v. Austria \(no. 48098/07\)](#)

ընդհան Ավստրիայի գործերով **ՄԻԵԴ**-ի կողմից **Կոնվենցիայի 8**-րդ հոդվածի խախտում էր ճանաչվել:

Եթե այս գործերի ուսումնասիրությունից հետո անդրադառնանք **Հայաստանին**, ապա պետք է նշենք, որ **Հայաստանի** դեմ նշված հիմքով **ՄԻԵԴ**-ում գործ չի քննվել, իսկ դատական պրակտիկան օնլայն տիրույթում ուսումնասիրելու ընթացքում որևէ գործ չի գտնվել, սակայն սա չի նշանակում որ **Հայաստանում** երբևէ որևէ մեկը չի դատապարտվել նույնասեռական լինելու հիմքով: Պարզապես նման գործերը հիմնականում անցկացվում են դոնփակ և հասարակության համար անհասանելի են: Թեև որպես խորհրդային բարքերին զոհ դարձած անձ պետք է նշենք 20-րդ դարի խոշորագույն հայ կինոռեժիսոր **Մերգեյ Փարաջանովին**, ով **երկու անգամ՝ 1948թ-ին և 1974թ-ին դատապարտվել է «արվամոլության» հոդվածով:**

ԼԳԲՏ ԱՆՉԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

ՀՀ-ն ստորագրել է բազմաթիվ միջազգային պայմանագրեր,¹² որոնք ուղղված են մարդու իրավունքների հարգմանը, խոշտանգումներից և վատ վերաբերմունքից պաշտպանված լինելու իրավունքին: Դրանով ՀՀ-ն որպես պայմանագրի կողմ ստանձնել է մարդու իրավունքերը պաշտպանելու, խախտումները արձանագրելու, կանխարգելելու և պատասխանատվություն սահմանելու պարտականություններ: Մակայն որքանով է այն իրականացվում ստանձնած պարտավորություններին համապատասխան, երևում է միջազգային և տեղական անկախ դիտորդական խմբերի զեկույցներից: **ՔԿՀ**-ներում խոշտանգումների կանխարգելման վերաբերյալ միջազգային հանձնառությունների կատարումը **Հայաստանի** կողմից խորհրդատվական փաստաթղթում մտահոգությունն է արտահայտվում **Հայաստանի** բանտերում տիրող բանտարկյալների միջև տիրող բռնության վերաբերյալ: Նշված փաստաթղթում ուղղակի անդրադարձ չկա **ԼԳԲՏ** անձանց հանդեպ ցուցաբերվող վերաբերմունքի մասին, սակայն այս տեղեկատվությունն ամբողջապես լրացնում է յուրաքանչյուր տարի հրապարակվող անկախ դիտորդական խմբի զեկույցի շնորհիվ: Նշված զեկույցի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ **ԼԳԲՏ** անձանց իրավունքների պաշտպանությունը ամենադժվարն իրականացվում է ազատագրկման վայրերում: Այնտեղ նրանք ենթարկվում են վատ վերաբերմունքի, խոշտանգումների և սեռական բռնության՝ կախված իրենց սեռական կողմնորոշումից: **Թեև ՀՀ կառավարության 3 օգոստոսի 2006 թվականի թիվ 1543-Ն որոշման համաձայն յուրաքանչյուր կալանավորված կամ դատապարտյալ անձ պետք է պահի իր անձնական հիգիենայի կանոնները, սակայն**

¹²Կոնվենցիա Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ; Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրություն; Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր Խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի եվրոպական կոնվենցիա

նույնասեռական անձանց հանձնարարվում և պարտադրվում է կատարել գուգարանի և լողասենյակի մաքրություն, աղբահանություն, տարածքի մաքրություն:

Նշված կառավարության որոշման համաձայն (56) Կալանավորված անձանց սննդի ընդունումը կազմակերպվում է օրվա կարգացուցակով սահմանված ժամերին խցերում: (57) Դատապարտյալների սննդի ընդունումը կազմակերպվում է օրվա կարգացուցակով սահմանված ժամերին փակ և կիսափակ ուղղիչ հիմնարկներում՝ խցերում, իսկ կիսաբաց և բաց ուղղիչ հիմնարկներում՝ ճաշարաններում:

Տեխնիկատնտեսական սպասարկման կամ այլ աշխատանքներում ներգրավված դատապարտյալները կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պետի թույլտվությամբ կարող են սնունդն ընդունել առանձին:

Նույնասեռականները չեն օգտվում միևնույն ճաշարանից: Նրանց սնունդը և սպասքը առանձնացված է: Թեև սնունդն առանձին ընդունելու համար կառավարության որոշմամբ սահմանված հիմքերը ոչ միշտ են առկա լինում: Սեռական բռնության ուղղակի գոհ լինելու սպառնալիքից ելնելով ՔՀԿ-ի վարչակազմը նրանց պահում է մյուս ազատագրված անձանցից առանձին, սակայն նրանց խցերը շատ ավելի վատ վիճակում է գտնվում:

Սա նախատեսվում է նաև **Եվրոպական բանտային կանոնների** մասին 18.6 կետով, այն է. մեկից ավելի բանտարկյալներ կարող են միասին տեղավորվել միայն այն դեպքում, երբ դա հարմար է նշված նպատակին, ընդ որում միասին տեղավորելու դեպքում պետք է ընտրվեն միմյանց հետ շփվելու տեսակետից միմյանց հարմար բանտարկյալներ:

18.5 կետի համաձայն բանտարկյալները պետք է գիշերվա ընթացքում սովորաբար տեղավորվեն անհատական խցերում, բացառությամբ երբ նախընտրելի է գիշերային քնի ընթացքում նրանց տեղավորել միևնույն խցում:

Թեև պետք է նշենք, որ եվրոպական բանտային կանոնների նշված կետերի պահպանման նպատակով չէ, որ ՀՀ-ի որոշ ՔՀԿ-ներ **ԼԳԲՏ** անձանց առանձին խցերում են պահում: ՔՀԿ-ի վարչակազմը սա բացատրում է, որ **ԼԳԲՏ** անձանց առանձին խցերում տեղավորում են նրանց անվտանգությունից ելնելով, մասնավորապես շահագործումից, սեռական բռնությունից, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից պաշտպանելու նպատակով: Այսինքն, վարչակազմը ինքն է հաստատում, որ նշված անձանց հանդեպ ազատագրկման վայրերում բռնություն է գործադրվում, սակայն հատկանշական է, որ խնդիրը լուծում են նրանց առանձին խցերում տեղավորելով: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ՀՀ ոչ բոլոր ՔԿՀ-ներն են համարվում փակ, ուստի պետք է նշենք որ **ԼԳԲՏ** անձինք օրվա մեծ մասը միասին անցկացնելու ընթացքում նույնպես կարող են ենթարկվել բռնության: Հատկանշական է, որ օնլայն տիրույթում չհայտնաբերվեց որևէ դատական գործ, որը հարուցված կլիներ ազատագրկման վայրերում **ԼԳԲՏ** անձանց նկատմամբ **ՀՀ քրեական օրենսքի 119-րդ** հոդվածով կամ սեռական անձեռնմխելիությունը պաշտպանող հոդվածներով: Թերևս սա պայմանավորված է այն հանգամանքով, որ ՔՀԿ-ներում կարգուկանոնն ապահովվում է ոչ միայն վարչակազմի կողմից, այլ նաև «զոն նայողների» և «օրենքով գողերի» կողմից: Այս երևույթի վերաբերյալ ՔԿՀ-ներում խոշտանգումների կանխարգելման վերաբերյալ միջազգային հանձնառությունների կատարումը

Հայաստանի կողմից խորհրդատվական փաստաթղթում դիտորդական խումբը արձանագրել էր, որ **«մտահոգիչ է այն փաստը, որ բանտի անձնակազմն այս երևույթին նորմալ և դրական է վերաբերվում»**¹³:

Եվրոպական բանտային կանոնների մասին 25.4 կետի համաձայն առանձնակի ուշադրություն պետք է դարձնել այն բանտարկյալների կարիքների վրա, ովքեր ֆիզիկական, հոգեկան կամ սեռական բռնության են ենթարկվել:

Քանի որ ՔԿՀ-ներում կարգուկանոնը պահպանելը վարչակազմի ամենօրյա աշխատանքի մասն է կազմում, ուստի պետք է նշենք, որ դիտորդական խմբերին հայտնած տեղեկությունների համաձայն ԼԳՖՏ անձինք ենթակվում են բռնության, սակայն չեն կարողանում պաշտպանել իրենց իրավունքները:

Ուսումնասիրելով միջազգային պրակտիկան ազատագրված ԼԳՖՏ անձանց պաշտպանության մասին՝ նշենք, որ Թուրքիան չի քրեականացնում նույնասեռականությունը, ավելին նախատեսում է ստեղծել առանձին բանտ ԼԳՖՏ անձանց համար: Թուրքիայի արդարադատության նախարարը նշել է, որ սա արվում է սեռական այլ կողմնորոշում ունեցող անձանց անվտանգությունն ապահովելու նպատակով, որին սակայն դեմ է արտահայտվել հասարակության որոշակի խումբ և գտել, որ ազատագրված վայրերում պահվող անձինք հավասար իրավունքներ ունեն և նրանց մեջ կարող են գտնվել անձինք, որոնք չեն ցանկանում բացահայտել իրենց սեռական կողմնորոշումը:

Սեռական կողմնորոշումը թաքցնելու խնդրին անդրադարձել է նաև **Հյուսիս Բայթս Ուոտչ**-ը իր **2008թ.** դիտարկումներում, համաձայն որոնց այն առասպելը, որ **«նույնասեռականը գիշատիչ է»** հիմնավորված չէ: **Մեջբերելով ԼԳՖՏ** անձանց խոսքերը՝ նա եկել է այն հետևության, որ նրանք ամենից շատ են ենթարկվում սեռական բռնության և շահագործման՝ ելնելով իրենց սեռական կողմնորոշումից, այդ պատճառով նրանցից շատերը թաքցնում են իրենց սեռական կողմնորոշումը: Թեև բանտերում իրականացնելով ուսումնասիրություններ, գտել են, որ **ԼԳՖՏ** անձինք ոչ միայն բռնության զոհ են դառնում, այլ նաև հանդես են գալիս որպես բռնություն կատարողներ: **Ամենատի ինթերնեյշնալի**¹⁴ համաձայն **ԼԳՖՏ** անձինք խոշտանգումների, վատ վերաբերմունքի և բռնության զոհ դառնալու վտանգի տակ են: **ԼԳՖՏ** անձինք թիրախային խումբ են և հաճախ են բռնության ենթարկվում կամ սպանվում բանտակիցների և բանտի աշխատակազմի կողմից¹⁵:

Պրակտիկայում առկա սույն խնդիրներն անհրաժեշտություն ունեն իրավական կարգավորման, մասնավորապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածը դատապարտյալներին անջատ պահելու հնարավորություն է նախատեսում միայն այն դեպքում, երբ վերջիններիս կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում: Հոդվածում թվարկված անջատ պահելու մյուս հիմքերը չեն կարող դիտվել որպես պաշտպանական միջոց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով զոհի կարգավիճակում գտնվող անձանց համար:

¹³ ՔԿՀ-ներում խոշտանգումների կանխարգելման վերաբերյալ միջազգային հանձնառությունների կատարումը Հայաստանի կողմից խորհրդատվական փաստաթուղթ, էջ 31

¹⁴ "No Escape: Male Rape in US Prisons". Human Rights Watch. Retrieved 2008-12-28.

¹⁵ "Crimes of Hate, Conspiracy of Silence: Torture and Ill-treatment based on Sexual Identity". Amnesty International. Retrieved 2008-12-28.

Հաշվի առնելով բարձրացված խնդիրները՝ անհրաժեշտություն կա որպես նշված պաշտպանական միջոցի կիրառման հիմքեր նախատեսել նաև խոշտանգման և սեռական անձեռնմխելիության ոտնձգության ենթարկման վտանգները:

Ինչ վերաբերվում է անջատ պահելուն որպես պաշտպանության միջոցի, ապա նշենք, որ Եվրոպական դատարանը Իքսն ընդդեմ Թուրքիայի գործով արձանագրել էր Կոնվենցիայի 3-րդ և 14-րդ հոդվածների խախտում, քանի որ դիմումատուն պահվել էր առանձին 7քմ մակերեսով խցում ավելի քան 13 ամիս՝ առանց զբոսնելու և այլ դատապարտյալների հետ շփման հնարավորության:

Ջյոկարտյան 9-րդ սկզբունքի համաձայն պետությունները հնարավորինս ապահովում են բոլոր դատապարտյալների մասնակցությունն իրենց պահման մասին որոշումների կայացմանը, որը կհամապատասխանի իրենց սեռական կողմնորոշմանն ու գենդերային ինքնությանը, ապահովում են պաշտպանության միջոցներ բոլոր դատապարտյալների համար, ովքեր կարող են խոցելի լինել բռնության կամ անթույլատրելի վերաբերմունքի դրսևորման տեսանկյունից սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության շարժառիթով, ինչպես նաև ողջամիտ սահմաններում ապահովում են, որպեսզի այդ պաշտպանության միջոցները չուղեկցվեն ավելի շատ սահմանափակումներով, քան դրանք սովորաբար կիրառվում են այլ ազատազրկվածների նկատմամբ:

Այսինքն, սույն պաշտպանական միջոցը կարող է կիրառվել դատապարտյալի համաձայնությամբ կարճ տևողությամբ և այդ ընթացքում առանց մյուս իրավունքներից օգտվելու հնարավորությունից զրկելու: Սույն մասով փաստենք նաև, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածը չի սահմանում դատապարտյալի համաձայնությունը որպես անջատ պահելու որոշման կայացման հիմք:

Անդրադառնալով ազատությունից զրկված ԼԳԲՏ անձանց իրավունքներին՝ նշենք, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքով դատապարտյալներն ունեն իրենց ընտանիքի անդամների, մերձավոր ազգականների հետ շփման իրավունք /հոդված 50/: Սույն մասով ուշագրավ է Ջյոկարտյան 9-րդ սկզբունքի «ե» կետը, որի համաձայն պետություններն ապահովում են, թույլատրելի դեպքերում, անկախ գենդերային պատկանելիությունից ամուսինների հանդիպումների տրամադրման հավասար հնարավորություններ:

Ինչպես կփաստենք հետագայում, նույնասեռ զույգերը ՀՀ օրենսդրությամբ չունեն ամուսնու կամ մերձավոր ազգականի կարգավիճակ, ինչն անհավասար պայման է հետերոսեքսուալ զույգերի համեմատ:

Այսպիսով փաստենք, որ ազատազրկման վայրերում ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ են լրացուցիչ կարգավորումներ:

ԱՍՈՒՄՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածը սահմանում է կամքի ինքնավարության հիման վրա տղամարդու և կնոջ ամուսնության իրավունքը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքը որպես ամուսնության կնքման հիմնական պայման, բացի կամքի ազատությունից և սահմանված տարիքից, նշում է նաև սուբյեկտներին, դրանք են՝ կինն ու տղամարդը:

ՀՀ դատական պրակտիկայում չկա նախադեպ սույն իրավական նորմերի ավելի լայն մեկնաբանման և իրավունքի սուբյեկտների շրջանակի ընդլայնման մասին:

Միջազգային իրավունքի նորմերում դրսևորված է գրեթե նույն մոտեցումը և որպես ամուսնական հարաբերությունների կողմեր նախատեսված են կինն ու տղամարդը, բացառությամբ մի քանի փաստաթղթերի: Մասնավորապես «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, որի 10-րդ հոդվածը նշում է «**ամուսնության մեջ մտնողներ**» տերմինը, ինչպես նաև **ԵՄ** մի շարք փաստաթղթեր, ինչպես օրինակ **Հիմնական իրավունքների մասին ԵՄ խարտիան**, որի 9-րդ հոդվածի համաձայն ամուսնության և ընտանիք կազմելու իրավունքը երաշխավորվում է ազգային օրենսդրությանը համապատասխան, որոնք կարգավորում են այդ իրավունքները:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 12-րդ հոդվածը նույնպես սահմանում է կնոջ և տղամարդու ամուսնության իրավունքը, իսկ դրա իրականացումը թողնում է պետությունների հայեցողությանը՝ ներպետական օրենսդրությանը համապատասխան:

Սկզբնական շրջանում **ՄԻԵԴ**-ի պրակտիկան տանում էր նրան, որ նույնասեռ անձանց հարաբերությունները չէին դիտարկվում Կոնվենցիայի 8-րդ հոդվածի ներքո, ուստի գանգատներն անընդունելի էին համարվում: Ապա մի շարք որոշումներով **ՄԻԵԴ**-ը **ԼԳԲՏ** անձանց ամուսնության և ընտանիք կազմելու իրավունքները սկսեց քննել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի դաշտում «**անձնական կյանք**» եզրույթի ներքո¹⁶:

Հետագայում **Եվրոպական դատարանը** վերանայեց սույն դիրքորոշումը՝ նշելով, որ Կոնվենցիան կենդանի փաստաթուղթ է, որը պետք է մեկնաբանվի այսօրվա գոյություն ունեցող պայմաններին համապատասխան և պարզաբանեց, որ **ՄԻԵԴ**-ը օգտագործել էր այդ մոտեցումը միայն զարգացնելու իր իրավասությունների շրջանակը, երբ անդամ պետությունների մոտ նկատել էր ստանդարտների տարբերություն **/Ի.Բ.-ն ընդդեմ Ֆրանսիայի գործով 92 կետը/**¹⁷:

Միայնքը եվ Քոպֆը ընդդեմ Ավստրիայի գործով ՄԻԵԴ-ը մեկնաբանեց. «Առանձին դիտարկված՝ 12-րդ հոդվածի ձևակերպումը հնարավոր է մեկնաբանել այնպես, որ չբացառի ամուսնությունը երկու տղամարդու կամ երկու կնոջ միջև: Այնուամենայնիվ, Կոնվենցիայի բոլոր այլ հիմնարար հոդվածները շնորհում են իրավունքներ և ազատություններ յուրաքանչյուրին կամ հայտարարում են, որ որևէ մեկը չպետք է ենթարկվի որևէ տեսակի արգելված վերաբերմունքի: **12-րդ հոդվածի ձևակերպման ընտրությունը, այսպիսով, պետք է համարվի որպես միտումնավոր:** Ավելին պետք է հաշվի առնվի այն պատմական համատեքստը, որում Կոնվենցիան ընդունվեց. 1950-ականներին ամուսնությունը հստակորեն հասկացվում էր ավանդական իմաստով՝ որպես տարբեր սեռի պատկանող գուզրնկերների միջև միություն»¹⁸:

¹⁶X. and Y. v. the United Kingdom, գանգատ № 9369/81, 03.05.1983թ., W. J. and D. P. v. the United Kingdom, գանգատ № 12513/86, 13.07.1987թ., C. and L. M. v. the United Kingdom, գանգատ № 14753/89, 09.10.1989 թ.

¹⁷E. B. v. France, գանգատ № 43546/02, 22.01.2008

¹⁸Schalk and Kopf v. Austria, № 30141/04, 24.06.2010

Փի. Բի.-ն և Ջեյ. Սի.-ն ընդդեմ Ավստրիայի գործով Եվրոպական դատարանը ընդգծեց. «Հաշվի առնելով այդ էվոյուցիան, դատարանը արհեստական է համարում պնդելը, որ ի տարբերություն տարբեր սեռերի միության, նույնասեռ զույգերը չեն կարող վարել ընտանեկան կյանք Կոնվենցիայի 8-րդ հոդվածի իմաստով: Հետևաբար, դիմումատուների հարաբերությունները, որպես համատեղ նույնասեռ զույգ, հիմնված երկարատև փաստացի զուգընկերության վրա, ընդգրկվում են «ընտանեկան կյանք» հասկացության մեջ, ինչպես կընդգրկվեին տարբեր սեռի զույգի հարաբերությունները նմանատիպ իրադրությունում»¹⁹:

ՄԻԵԴ-ն անդրադարձել է նաև տրանսգենդեր անձի ամուսնության իրավունքին: Սկզբնական շրջանում **ՄԻԵԴ**-ը, համաձայնվելով պետության հայեցողական լիազորությունների հետ, ինչպես նաև հիմք ընդունելով **կենսաբանական սեռը**, 12-րդ հոդվածի խախտում չէր արձանագրում²⁰:

Սակայն 2002թ-ին Եվրոպական դատարանը փոխեց իր դիրքորոշումը **Քրիստին Գուդվինն ընդդեմ Մեծ Բրիտանիայի**²¹ և Ի.-ն ընդդեմ **Մեծ Բրիտանիայի** ²² գործերով՝ նշելով, որ **սեռը փոխած տրանսսեքսուալ անձանց ամուսնության իրավունքից զրկումն անթույլատրելի է՝** հավելելով, որ որևէ **զույգի հղիանալու կամ ծնող դառնալու անկարողությունը չի կարող ինքնին համարվել ամուսնության իրավունքից զրկում:**

Սույնի վերաբերյալ **Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի REC(2010)5 հանձնարարականի 22-րդ կետն** ամրագրում է.

«Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի վերոնշյալ 20-րդ և 21-րդ կետերի համաձայն սեռի ուղղումից և համապատասխան իրավական ճանաչումից հետո, ապահովեն տրանսգենդեր անձանց իրավունքն ամուսնանալու այն անձանց հետ, ում սեռն իրենց նոր ճանաչված սեռի հակառակն է»:

Այսպիսով, անդրադառնալով ՀՀ և **միջազգային իրավական** նորմերի ընդունման պահին դրանց նպատակին ու նշանակությանը և ներկա զարգացումներին՝ փաստենք, որ ամուսնության իրավունքի օրենսդրական ամրագրման պահին սուբյեկտների որոշման հարցում որոշիչ է եղել **«կենսաբանական սեռը»**, մինչդեռ հետագայում հասարակական կյանքում կատարված փոփոխությունները հանգեցրել են նրան, որ այդ նորմերը մեկնաբանվում են հիմք ընդունելով **«սոցիալական սեռ»** եզրույթը:

Առկա փոփոխությունների դաշտում **ԼԳԲՏ** զույգերի ամուսնության ճանաչման հարցում մասնակից պետություններն ունեն լայն հայեցողություն, սակայն այդ

¹⁹ P. B. and J. S. v. Austria, № 18984/02, 22.07. 2010

²⁰ Van Oosterwijck v. Belgium, զանգաստ № 7654/76, 06 .11. 1980 թ., Rees v. the United Kingdom, զանգաստ № 9532/81, 17.10. 1986 թ.

²¹ Christine Goodwin v. the United Kingdom, № 28957/95, 11

²² I. v. the United Kingdom, № 25680/94, 11.07. 2002

հայեցողությունն անսահմանափակ չէ: Սույնին կանդրադառնանք ստորև: Ինչպես տեսնում ենք վերը նշված **Եվրոպական դատարանի** նախադեպային պրակտիկայից, **ՄԻԵԴ-ը ԼԳԲՏ** անձանց ամուսնության իրավունքը դիտարկում է **«ամուսնություն»** և **«ընտանիք»** հասկացությունների շրջանակում:

Այս առումով **թիվ 1728** բանաձևով բարձրացվել է դե-ֆակտո գոյություն ունեցող **«ԼԳԲՏ ընտանիքների»** իրավական ճանաչման և պաշտպանության խնդիրը և որպես լուծում կոչ է արվել ապահովելու նույնասեռ զուգընկերների իրավական ճանաչումը մի քանի ուղիներով, այդ թվում նաև տրամադրելով **«մերձավոր ազգական»** կարգավիճակը, **եթե ներպետական օրենսդրությունն այդպիսի կարգավիճակ նախատեսում է:**

Նախ նշենք, որ ՀՀ ընտանեկան օրենսգիրքը չի սահմանում **«ընտանիք»** և **«մերձավոր ազգական»** հասկացությունները, չի նշում ընտանիքի անդամների կազմը, սակայն տալիս է մերձավոր ազգականների կազմը՝ կապված այդ անձանց միջև ամուսնության արգելքի հետ, այսինքն՝ ուղիղ վերընթաց ու վարընթաց ազգականների՝ ծնողների ու զավակների, պապի, տատի ու թոռների, ինչպես նաև հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի, մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և մորեղբոր զավակների:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով մերձավոր ազգականների կազմն ավելի լայն է, այն է՝ ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ և ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրները և քույրերը, պապը, տատը, թոռները, ինչպես նաև ամուսինը և ամուսնու ծնողները, վերջիններիս համար՝ փեսան և հարսը:

Իհարկե, նշված օրենսգրքերը տարբեր հարաբերություններ են կարգավորում, տարբեր նպատակներ հետապնդում, սակայն դրանցում նախատեսված չէ զուգընկեր կամ մեկ այլ տերմին, որը կներառի նույնասեռ անձանց զույգը/ընտանիքը/: Հետևաբար, վերջիններս **ապահովված չեն այնպիսի հիմնարար իրավունքներով, ինչպիսիք են մերձավոր ազգականի դեմ ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքը, տուժողի իրավահաջորդ հանդիսանալու իրավունքը** և այլն:

ԵՆ ՆԿ REC(2010)5 հանձնարարականի 25-րդ կետի համաձայն, եթե ազգային օրենսդրությունը չի ճանաչում և չի ամրագրում **գրանցված նույնասեռ զուգընկերների և ամուսնության մեջ չգտնվող զույգերի** իրավունքներ կամ պարտականություններ, մասնակից պետությունները խրախուսվում են առանց որևէ խտրականության, այդ թվում տարբեր սեռերի զույգերի նկատմամբ, նույնասեռ զույգերին իրավական կամ այլ միջոցների երաշխիքներ տրամադրելուն՝ ուղղված գործնականում ծագող այն խնդիրներին, որոնք վերաբերվում են սոցիալական իրականությանը, որում նրանք ապրում են:

Սույն հանձնարարականի բացատրական հուշագրում 25-րդ կետի մեկնաբանությամբ մասնակից պետությունները պարտավորվում են որևէ պաշտպանական միջոց տրամադրել նույնասեռ անձանց զույգերին, կլինի դա իրավական, թե այլ, որը նրանց համար երաշխիքներ կընձեռի ամուսնության կարգավիճակի բացակայության պայմաններում: Սրա հետ կապված նշենք, որ դեռևս

2000 թվականին **ԵՆ Խորհրդարանական Վեհաժողովն ընդունել է 1474 (2000) հանձնարարականը**, որով մասնակից պետություններին առաջարկվել է **ընդունել օրենք նույնասեռ անձանց գույզնկերությունը գրանցելու մասին**: Իսկ 14.01.2009 թ.-ին Եվրոպական Խորհրդարանը այն մասնակից պետություններին, որոնք դեռևս չէին կատարել սույն պարտավորությունը, կոչ էր արել հավասարության սկզբունքը կիրառելու համար ընդունել օրենսդրական միջոցներ **խտրականության** դեմ պայքարելու համար, որին ենթարկվում են որոշ գույզեր իրենց սեռական կողմնորոշման հիմքի պատճառով:

ՀՀ ընտանեկան օրենսգիրքը սահմանում է միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնում գրանցված ամուսնության ճանաչումը, որից էլ ծագում են ամուսինների իրավունքներն ու պարտականությունները:

ՀՀ-ում փաստական ամուսնությունը որևէ իրավական կարգավիճակ չունի և որևէ իրավական հետևանք չի առաջացնում:

Իհարկե, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է նաև ամուսնության պայմանագրի ինստիտուտը, սակայն վերջինս ուժի մեջ է մտնում միայն պետական գրանցման պահից, հետևաբար **ԼԳՏՏ** անձանց ամուսնական հարաբերությունները չեն կարող կարգավորվել պայմանագրային հարաբերություններով:

Ինչպես տեսնում ենք տեղի է ունեցել **ԼԳՏՏ անձանց սեգրեգացիա ՀՀ իրավական համակարգից, խտրականություն՝ դրսևորված սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով**, քանի որ **ի տարբերություն տարբեր սեռերի փաստական ամուսնության, ովքեր իրավունք ունեն և կարող են գրանցել իրենց ամուսնությունը, ԼԳՏՏ անձինք ընդհանրապես զրկված են այդ հնարավորությունից**:

Սույնի հիման վրա փաստենք, որ չունենալով ամուսինների կամ մերձավոր ազգականների կարգավիճակ՝ **ԼԳՏՏ** անձինք զրկվում են մի շարք իրավունքներից, ինչպիսիք են ամուսնության ընթացքում ձեռքբերված գույքի բաժնետիրոջ կամ ժառանգի կամ վարձակալի ընտանիքի անդամի իրավունքներից օգտվելը և այլն: Այս մասով **ՄԻԵԴ**-ն անդրադարձել է **Կոնվենցիայի 12-րդ** հոդվածում նախատեսված հիմնական պայմաններից մեկի մեկնաբանմանը այն է՝ ամուսնության իրավունքի իրականացումը **ներպետական օրենսդրությանը համապատասխան**:

ՄԻԵԴ-ը Սաթա Էսթևեզն ընդդեմ Իսպանիայի գործով նշել է.

«Չնայած եվրոպական մի շարք պետություններում նույնասեռականների միջև գույզնկերության կայուն դե ֆակտո իրավական և դատական ճանաչման աճող միտմանը՝ ելնելով պայմանավորվող Պետությունների միջև փոքր ընդհանրության առկայությունից, սա դեռևս մի բնագավառ է, որտեղ նրանք օգտվում են հայեցողության մեծ շրջանակից»²³ :

Սակայն 2003 թվականին **Քարներն ընդդեմ Ավստրիայի** գործով դատարանը փոխեց իր դիրքորոշումը և արձանագրեց, որ խտրականության վերացման համար

²³ Mata Estevez v. Spain, գանգատ № 56501/00, 10.05.2001թ.

անհրաժեշտ է հիմնավորել իրավաչափ նպատակի առկայությունը, ինչպես նաև ողջամիտ համաչափությունը կիրառվող միջոցների և նպատակի միջև և ընդգծեց, որ պետությունների հայեցողությունը կապված սեռական կողմնորոշման հետ **սահմանափակ է**, այդ իսկ պատճառով տարբերակված մոտեցման արդարացման համար **անհրաժեշտ են առանձնահատուկ պատճառներ**, այն է՝ պետք է ցույց տալ, որ իրավաչափ նպատակին հասնելու համար հոմոսեքսուալ գույգերի **բացառումը** օրենսդրական կարգավորման դաշտից **անհրաժեշտ է**²⁴ :

Միննույն ժամանակ **Կոզակն ընդդեմ Լեհաստանի** գործով դատարանն ընդգծեց, որ պետությունները, պահպանելով հավասարակշռությունը ընտանիքի և սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության միջև, պետք է հաշվի առնեն հասարակությունում կատարվող փոփոխությունները, այդ թվում նաև այն հանգամանքը, որ անձնական կյանքը կարող է իրականացվել ոչ միայն մեկ միջոցով: Հոմոսեքսուալ գույգերի ամբողջական բացառումը վարձակալական իրավունքների ժառանգումից չի կարող համարվել **անհրաժեշտ միջոց** ավանդական ընտանիքի պաշտպանության համար²⁵:

Հաշվի առնելով վերը բերված հիմքերն առ այն, որ **ԼԳԲՏ** անձինք ամբողջապես բացառված են մի շարք նյութական իրավական ինստիտուտներից, ինչպես նաև հիմք ընդունելով **Եվրոպական դատարանի** վերոգրյալ դիրքորոշումները՝ ակնհայտ է, որ նման պայմաններում **Հայաստանի Հանրապետության** միջամտությունը **ԼԳԲՏ** անձանց իրավունքներին չի կարող համարվել անհրաժեշտ միջոց ավանդական ընտանիքները պահպանելու համար:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ **ՀՀ ընտանեկան օրենսգրքի 143-րդ** հոդվածը նախատեսում է ՀՀ տարածքից դուրս կնքված ամուսնության ճանաչում **հյուպատոսական օրինականացման վավերացման պայմաններում**:

«Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածը սահմանում է, որ վավերացման ենթակա չեն այն փաստաթղթերն ու ակտերը, որոնք հակասում են **Հայաստանի Հանրապետության** օրենսդրությանը կամ իրենց բովանդակությամբ կարող են վնաս հասցնել **Հայաստանի Հանրապետության** շահերին կամ պարունակում են **Հայաստանի Հանրապետության** քաղաքացիների պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկություններ:

Հաագայի 1961թ.-ի հոկտեմբերի 5-ի «Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին» կոնվենցիան, որին **Հայաստանի Հանրապետությունը** միացել է **14.08.1994թ.**-ին, պետություններին ազատել է փաստաթղթերի /այդ թվում դատական և վարչական ակտերի/ օրինականացումից, որոնք պետք է ներկայացվեն իրենց տարածքում:

Սույն կոնվենցիայով որևէ բացառություն չի նախատեսված օրինականացումից ազատելու համար, ընդամենը նախատեսված է դրա չկիրառումը արդեն իսկ

²⁴ Karner v. Austria, գանգատ № 40016/98, 24.07.2003թ.

²⁵ Kozak v. Poland, գանգատ № 13102/02, 02.03. 2010թ.

կատարված փաստաթղթերի և առևտրային կամ մաքսային գործունեության հետ ուղղակիորեն կապված վարչական փաստաթղթերի նկատմամբ: **Հետևաբար, «Հյուպատոսական ծառայությունների մասին» օրենքով սահմանված բացառությունները չեն համապատասխանում վերոգրյալ կոնվենցիային, ուստի և չեն կարող կիրառվել:**

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ-ում վավեր են վերոգրյալ կոնվենցիան ստորագրած պետության տարածքում կնքված **ԼԳՖՏ** գույգերի ամուսնությունն առանց հյուպատոսական օրինականացման, ինչի դեպքում տարբերակված մոտեցում է դրսևորվում ՀՀ տարածքում բնակվող **ԼԳՖՏ** գույգերի համար:

Այսպիսով, ուսումնասիրելով **ԼԳՖՏ** գույգերի ճանաչման և դրա իրականացման դաշտում պետությունների հայեցողության սահմանների վերաբերյալ **ՄԻԵԴ** պրակտիկան և ՀՀ օրենսդրությունը՝ փաստենք, որ

1. **ԼԳՖՏ** գույգերը ՀՀ-ում առ այսօր չունեն որևէ իրավական կարգավիճակ կամ այլ պաշտպանական միջոց, ինչը հակասում է **ԵՆ ՆԿ REC(2010)5** հանձնարարականի 25-րդ կետին,
2. չնայած ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է «մերձավոր ազգական» կարգավիճակ, սակայն դրանում ներառված չեն նույնասեռ գույգերը, ինչը չի համապատասխանում **Խորհրդարանական Վեհաժողովի թիվ 1728 /2010/** բանաձևին,
3. ՀՀ օրենսդրությամբ **ԼԳՖՏ** գույգերին իրավական կարգավիճակ չամրագրելով՝ նրանց նկատմամբ դրսևորվել է խտրականություն այն մասով, որ ի տարբերություն տարբեր սեռերի գույգերի փաստական ամուսնության, ովքեր կարող են գրանցել իրենց ամուսնությունը, **ԼԳՖՏ** անձինք ընդհանրապես զրկված են նման հնարավորությունից,
4. **ԼԳՖՏ** գույգերի բացառումը ՀՀ օրենսդրությունից չի կարող համարվել անհրաժեշտ միջոց ավանդական ընտանիքի պաշտպանության համար **ՄԻԵԴ** պրակտիկային համապատասխան,
5. ՀՀ –ի կողմից մի շարք պետություններում կնքված **ԼԳՖՏ** գույգերի ամուսնության վավեր ճանաչումը ուղղակի խտրականություն է ՀՀ տարածքում բնակվող **ԼԳՖՏ** գույգերի նկատմամբ:

ԿԵՆՏՐԱԼ ԱՎԱԿԱՆ ՄԵՌԸ ՓՈԽԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՆՈՐ ՄԵՌԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՃԱՆԱԶՈՒՄԸ

Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության մասին թիվ 1728 /2010/ բանաձևով տրված է «տրանսգենդեր» տերմինի բնորոշումը, ըստ որի տրանսգենդեր են կոչվում այն մարդիկ, ում գենդերային ինքնությունը չի համապատասխանում կենսաբանական սեռի հետ:

ՄԻԵԴ նախադեպային իրավունքում տրանսգենդեր անձանց վերաբերյալ հիմնականում երկու ուղղությամբ են զարգացումներ գրանցվել՝ սեռի ուղղման և նոր սեռի իրավական ճանաչման:

ԵՄ Նախարարաների կոմիտեի «Գենդերային հավասարության ստանդարտների և մեխանիզմների մասին» Rec(2007) 17 հանձնարարականում նշված է. «Եվ՝ կանայք, և՛ տղամարդիկ անօտարելի իրավունք ունեն որոշելու սեփական մարմնի հարցը, այդ թվում սեռական և վերարտադրողական հարցերը»²⁶:

ԵՄ ՆԿ REC(2010)5 հանձնարարականի 35-րդ կետի համաձայն մասնակից պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն ապահովելու տրանսգենդեր անձանց սեռն ուղղելու **անհրաժեշտ** ծառայությունների **իրական** մատչելիության իրավունքը, այդ թվում հոգեբանական, էնդոկրիոլոգիական և վիրաբուժական ծառայություններից, **առանց ավելորդ պահանջների առաջադրման** այդ անձանց նկատմամբ. անձը առանց իր համաձայնության չպետք է ենթարկվի սեռն ուղղելու գործընթացին:

Նախադեպային իրավունքը սեռական ինքնորոշման իրավունքը դիտարկում է որպես անձնական կյանքի բաղադրատարր և ստորագրած պետություններից **պահանջում է երաշխավորել** սեռն ամբողջությամբ փոխելուն ուղղված վիրաբուժական վիրահատությունների կատարման հնարավորությունը, ինչպես նաև **«բժշկության տեսանկյունից անհրաժեշտ»** բուժման ամբողջական ապահովագրումը, որի մասն է կազմում սեռափոխման վիրահատությունը»²⁷:

Սեռափոխման բուժման ծախսերի ապահովագրության մասով հանձնարարականի 36-րդ կետը պահանջում է, որ օրենսդրորեն միջոցներ ձեռնարկվեն այդ ծախսերը սահմանափակող որոշումների օրինականությունը, օբյեկտիվությունն ու համաչափությունն ապահովելու համար:

Ինչպես տեսնում ենք, հանձնարարականի 35-րդ կետն ընդգծում է մի շարք էական պայմաններ՝ 1) **ծառայությունների անհրաժեշտ և դրանց մատչելիության իրական լինելը**, 2) **ավելորդ պահանջումների անթույլատրելիությունը**, 3) **անձի համաձայնությունը այդ գործընթացին**:

Նշված պայմաններում օգտագործված են գնահատողական արժեքներ, որոնք ունեն մեկնաբանման խնդիր, ինչպես նաև ոչ պատշաճ վարչարարության դեպքում կարող են հանգեցնել բողոքարկման՝ ըստ այդմ բարձրացնելով ապացուցման հարց: Մույն մասով կարևորվում է **Խորհրդարանական Վեհաժողովի** պահանջը սեռափոխման բուժման, այդ թվում նաև վիրահատությունների, հարցերի կարգավորումը օրենսդրական մակարդակով ամրագրելը:

Մասնավորապես Վեհաժողովի թիվ 1728 բանաձի 16.11.3 կետի համաձայն Վեհաժողովը կոչ է անում մասնակից պետություններին միջոցներ ձեռնարկել տրանսգենդերային կողմնորոշում ունեցող անձանց նկատմամբ խտրականության և մարդու իրավունքների խախտումների դեմ, մասնավորապես օրենսդրության մեջ և պրակտիկայում ամրագրել նրանց իրավունքը սեռափոխման բուժման մատչելիության և բժշկական սպասարկման ոլորտում հավասար կարգավիճակի մասին:

²⁶ ԵՄ Նախարարների կոմիտեի Rec(2007) 17 հանձնարարական, 21.11.2007, սկզբունք 44

²⁷ <<Վան Կյուկն ընդդեմ Գերմանիայի>>, № 35968/07, 12.06. 2003, կետեր՝ 73 – 86

Ինչ վերաբերվում է բժշկական սպասարկման ոլորտում հավասար կարգավիճակին կամ ծախսերին, ապա **Եվրոպական դատարանն** անդրադարձել է սեռափոխման բժշկական ծախսերի փոխհատուցմանը մի քանի գործերով՝ նշելով, որ բժշկական անհրաժեշտ միջոցների հարցը սեռափոխման հարցերով իրավական լուծման խնդիր չէ: Տրանսսեքսուալների դեպքում բժշկական միջամտության **անհրաժեշտությունը**, ինչպես նաև տրանսսեքսուալության պատճառները կրում են բժշկական բնույթ, այդ իսկ պատճառով դատարանները չեն կարող դրանք թույլատրել **առանց համապատասխան մասնագետի ներգրավման**: Բացի այդ, վիրաբուժական վիրահատությունների անհրաժեշտության ապացուցման բեռը տրանսսեքսուալի վրա դնելն անթույլատրելի է՝ **/Վան Կյուկն ընդդեմ Գերմանիայի և Շյումպֆեր ընդդեմ Շվեյցարիայի²⁸ գործերը/**:

Այսինքն, սեռը փոխելու իրավունքը տրանսգենդերը պարտավոր է իրացնել դատական պաշտպանության միջոցով, որում կարևորվում է բժշկական եզրակացության դերը միջամտության անհրաժեշտության վերաբերյալ:

Այսպիսին է միջազգային պրակտիկան, մինչդեռ **ՀՀ** օրենսդրությամբ ոչ միայն նախատեսված չէ **«տրանսգենդեր»** տերմինի բնորոշումը, այլև նրանց իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում սեռափոխման վիրահատության իրավունքի և դրա հետևանքների մասով:

Անդրադառնանք նաև սեռափոխման վիրահատությունից հետո նոր սեռի ճանաչման կարգավորումներին:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ 20.05.2013թ-ին **ՀՀ** ազգային ժողովն ընդունեց **«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը**, որի 3-րդ հոդվածը սահմանում է **«գենդեր»** հասկացությունը՝ բնորոշելով այն որպես տարբեր սեռի **ձեռքբերովի, սոցիալապես ամրագրված վարք**:

Հաշվի առնելով, որ **ՀՀ** օրենսդրությամբ ամրագրվել է նորմ, որը **«սեռ»** տերմինը մեկնաբանում է որպես ձեռքբերովի և սոցիալական վարք, ապա ինքնըստինքյան կյանքում առկա այդպիսի վարքի ինքնորոշման հարցը պետք է կարգավորվի օրենքի միջոցով: Սրա հետ կապված է նաև անձի իրավասուբյեկտության հարցը, որն ամրագրված է մի շարք միջազգային ակտերով, այդ թվում նաև **«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի 16-րդ հոդվածով**: Սրա վերաբերյալ **Եվրադատարանը Քրիստին Գուդվինի** գործով նշել էր, որ քրոմոսոմային էլեմենտները չեն կարող այլևս որոշիչ դեր խաղալ անձի սեռային պատկանելիության հարցում, իսկ մասնակից պետությունների շրջանում տեղի են գտնվում տրանսսեքսուալների **«նոր սեռային ինքնությունը»** ճանաչելու հարցում նրանց վիրահատություններից հետո:

Այս և **Բ-ն ընդդեմ Ֆրանսիայի գործով²⁹** դատարանն արձանագրեց, որ ավարտված սեռափոխությունից իրավական ճանաչման մերժումը պետության կողմից խախտում է

²⁸ Schlumpf v. Switzerland, № 29002/06, 8.01. 2009

1. ²⁹ B. v. France, № 13343/87, 25.03.1992

Կոնվենցիայի 8-րդ հոդվածը և հավելեց, որ դրանով պետությունները կրում են դրական պարտավորություն ճանաչելու տրանսսեքսուալի **նոր ինքնությունը**, որն իր մեջ ներառում է այնպիսի պաշտոնական փաստաթղթերի տրամադրում, ինչպիսին են ծննդյան վկայականը, վարորդական իրավունքի վկայականը, անձնագիրը, սոցապահովության քարտերը և ընտրական, հողային և հարկային ռեեստրի հաշվեհամարները: Սույնի հետ կապված հանձնարարականի 21-րդ կետը պարտավորեցնում է մասնակից պետություններին անհրաժեշտ միջոցներ կիրառել սեռափոխումից հետո անձի իրավական ճանաչման համար բոլոր ոլորտներում, մասնավորապես պաշտոնական փաստաթղթերում անձի **անվան փոփոխման և սեռի գրառման** ապահովման ուղով՝ օգտագործելով **արագ, թափանցիկ և մատչելի միջոցներ**, ինչպես նաև այդպիսի ճանաչումը մասնավոր սուբյեկտների կողմից այնպիսի ելքային փաստաթղթերում, ինչպիսին դիպլոմն է:

Ինչպես տեսնում ենք, հանձնարարականում ուշադրություն է դարձվել նաև անձի իրավական ճանաչման տևողությանն ու թափանցիկությանը, սակայն այս դաշտում պաշտպանվում է նաև անձնական տվյալների գաղտնիության պահպանումը համաձայն 19-րդ կետի: Հանձնարարականի 20-րդ կետը հստակեցնում է, որ սեռափոխման իրավական ճանաչմանն ուղղված պահանջումները պետք է պարբերաբար վերանայվեն, որպեսզի ոչ հումանիտար պահանջները բացառվեն:

Թիվ 1728 բանաձևի 16.11.2-ի կետով **Վեհաժողովը** կոչ է անում պետություններին կիրառել միջոցներ տրանսգենդերային կողմնորոշմամբ անձանց նկատմամբ խտրականության և մարդու իրավունքների խախտումների դեմ, մասնավորապես ամրագրել օրենսդրության մեջ կամ պրակտիկայում **ստանց նախնական ստերիլիզացման կամ այլ բժշկական ընթացակարգերի ենթարկվելու ստանալ** իրենց նախընտրած **գենդերային** ինքնության նշումով փաստաթղթերը:

Այսպիսով, ելնելով սույն ուսումնասիրությունից և ՀՀ օրենսդրությամբ սեռափոխման վերաբերյալ դրույթների բացակայությունից՝ պետք է փաստենք, որ ՀՀ-ը չի կատարել իր պարտավորությունները, որոնք ստանձնել է ստորագրելով **Եվրոպական կոնվենցիան**՝ հաշվի առնելով վերհանված հետևյալ խնդիրները.

1. ՀՀ-ում տրանսգենդեր անձանց բուժման, այդ թվում սեռափոխման վիրահատությունների իրականացման մեխանիզմներ չկան: Սա վերաբերում է նաև սեռը փոխելու իրավունքի ճանաչմանը, դրա իրականացման նյութական և դատավարական առանձնահատկությունների ամրագրմանը՝ կապված բժշկական ծառայությունների անհրաժեշտության և իրական մատչելիության հետ, դատավարական գործընթացում բժշկի ներգրավման, սոցիալական ապահովագրման հետ,
2. Չկան սահմանված նորմեր սեռափոխման վիրահատությունից հետո տրանսսեքսուալի նոր սեռի ճանաչման մասին, որն իր մեջ ներառում է պաշտոնական և ոչ պաշտոնական փաստաթղթերում անվան փոփոխում և փոխված սեռի գրառման և այդ փաստաթղթերի տրամադրում:

Ինչպես գիտենք **Կոնվենցիայի 14**-րդ հոդվածը արգելում է խտրականության դրսևորումը միայն **Կոնվենցիայով** երաշխավորված իրավունքների շրջանակում: Մակայն **ՀՀ-ն ընդունել է թիվ 12 արձանագրությունը, որի 1-ին հոդվածի համաձայն օրենքով սահմանված ցանկացած իրավունքից** օգտվելը պետք է ապահովվի առանց սեռի, ռասայի, գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնության պատկանելու, սեփականության, ծննդի կամ այլ կարգավիճակի վրա հիմնված խտրականության: Այսինքն, թիվ 12 արձանագրությամբ օրենքով սահմանված ցանկացած իրավունքից օգտվելիս խտրականությունն արգելվում է: Սույնի հիման վրա ուշադրության է արժանի առողջապահական ոլորտում ծառայությունների մատուցման իրավունքի իրականացման դաշտում նույնասեռ անձանց կողմից արյան նվիրաբերման հարցը: Մասնավորապես **«Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» ՀՀ օրենքը**³⁰ կարգավորում է արյան և դրա բաղադրամասերի շրջանառության, դոնորության և ցուցաբերվող փոխներարկումային բժշկական օգնության որակի և անվտանգության հետ կապված հարաբերությունները: Սույն օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, թե ով կարող է լինել արյան դոնոր, այն է՝ 18 տարին լրացած, **արյունատվության հակացուցում չունեցող անձ**, որը կամովին հանձնում է արյուն կամ արյան բաղադրամասեր: Ի թիվս տարիքային և կամավոր կարգով արյան տրամադրման պայմանների, հոդվածը նշում է **արյունատվության հակացուցում չունենալու հանգամանքը**: «Արյունը կամ դրա բաղադրամասերը վերցնելուց առաջ արյան դոնորի առողջության պահպանման նպատակով վերջինիս կողմից անվճար բժշկական հետազոտություն անցնելու կարգը և դոնորության համար հակացուցումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 07.02.2013 թ-ի հրամանի հավելված 2-ով հաստատված դոնորության հակացուցումների ցանկի 1-ին մասի 15-րդ կետի «ա» ենթակետի համաձայն **բացի դոնացիան բացառող մշտական հակացուցումներից, արյունատվության բացառման համար հիմք են հանդիսանում նաև որոշակի ռիսկային խմբերին պատկանող անձինք, այդ թվում արվամոլները...** Այսինքն նույնասեռ անձինք զրկված են արյուն տալու հնարավորությունից և ընդգրկված են ռիսկային խմբերի մեջ: Սրանով դրսևորվել է տարբերակված մոտեցում սեռական կողմնորոշման հիմքով նույնասեռ անձանց նկատմամբ, քանի որ բոլոր դոնորները հետազոտվում են նույն հրամանի 1-ին հավելվածի 7-րդ կետով սահմանված հիվանդությունների բացահայտման համար:

Պետությունը կրում է պարտավորություն ապացուցելու նշված դրույթի ամրագրման իրավաչափ նպատակը, միջամտության անհրաժեշտությունն ու կիրառվող միջոցների համաչափությունը, քանի որ սեռական վարակակիր կարող է լինել ցանկացած անձ

³⁰ ընդունվել է 15.11.2011 թ.-ին, N ՀՕ-275-Ն

անկախ սեռական կողմնորոշումից: Տվյալ դեպքում պետության կողմից պետք է ապացուցվի ռիսկայնությունը և այն հանգամանքը, որ նույնասեռ անձինք **ինքնին** վտանգ են ներկայացնում արյան փոխներարկման համար, ինչը բխում է հողվածի «**ռիսկային խումբ**» բառակապակցությունից: Հողվածի նման ձևակերպումն իր մեջ պարունակում է վիրավորանքի տարրեր, ինչն իր հերթին **հակասում է սեռական կողմնորոշման իրավունքին ընդհանրապես**, որը երաշխավորված է ն' **ԵՄ ՆԿ REC(2010)5 հանձնարարականով**, ն' **բանաձևով**, ն' **Եվրոպական կոնվենցիայով**, ն' **այլ ակտերով**: Ուշագրավ է այն հանգամանքը, որ «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հողվածի 6-րդ կետով սահմանված են արյան դոնորության ընթացքում դրսևորվող խտրականության հիմքերը, որոնց մեջ սեռական կողմնորոշման հիմքը բացակայում է: **Մակայն, իհարկե, հողվածում սահմանված հիմքերի ցանկը սպառիչ չէ**: Ավելին, հարց է ծագում, թե ինչպես է բացահայտվում «արվամոլ» լինելու հանգամանքը, քանի որ ՀՀ առողջապահության նախարարի 24.01.2012թ.-ի N 02-Ն հրամանի թիվ 1 հավելվածով սահմանված է դոնորի հարցաթերթիկի ձևը, որում այդ հանգամանքի բացահայտմանն ուղղված հարց նախատեսված չէ: Ընդգծված համգամանքը մտնում է անհատական տվյալների պաշտպանության ներքո, հետևաբար առանց ֆորմալ ձևի անձից իր ինքնության վերաբերյալ տեղեկատվության կորզումն իրավաչափ չէ:

Այսպիսով, փաստենք, որ ՀՀ օրենսդրությամբ դրսևորվել է խտրականություն նույնասեռ անձանց նկատմամբ սեռական կողմնորոշման հիմքով, որն ավելի է կարևորվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ արյան տրամադրման դեպքում դոնորները փոխհատուցում ստանալու իրավունք ունեն:

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Մայիտակ գրքի միջմշակութային երկխոսության համաձայն բոլոր հանրությունները պետք է ընդունեն և հարգեն մշակութային բազմազանությունը: Մույն գրքի **5.1 բաժինը** ցուցում է տալիս առ այն, որ պետությունները պետք է ընդունեն օրենսդրությունն աստելության քարոզման արգելման մասին՝ **արտահայտված ռասայական, այլատյացության, հոմոֆոբիայի, իսլամաֆոբիայի, հակագնչուական և այլ հայացքներով, որոնք հանգեցնում են աստելության հրահրման և բռնության**:

30.10.1997թ.-ի «Ատելություն սերմանող խոսքի մասին» **ԵՄ Նախարարների կոմիտեի թիվ R(97)20** Հանձնարարականի համաձայն **աստելության խոսքը** ենթադրում է արտահայտման բոլոր ձևերը, որոնցով տարածվում, հրահրվում, խրախուսվում կամ արդարացվում է ռասայական աստելությունը, այլատյացությունը, անտիսեմիտիզմը և աստելության այլ ձևերը, որոնք հիմնված են անհանդուրժողականության վրա, այդ թվում՝ ազրեսիվ ազգայնականությամբ և ազգակենտրոնությամբ արտահայտված անհանդուրժողականությունը, փոքրամասնությունների, ներգաղթյալների և գաղթական ծագման անձանց նկատմամբ խտրականությունը և թշնամանքը»:

ԵՄ ՆԿ REC(2010)5 հանձնարարականի բացատրական հուշագրում «աստելության խոսք» հասկացությունը ընդգրկում է աստելության արտահայտման բոլոր ձևերը, **անկախ օգտագործված արտահայտություններից**, այդ թվում ինտերնետը և

մասսայական ինֆորմացիայի ժամանակակից այլ միջոցները: Ատելության խոսքը բացառում է ազատ արտահայտման իրավունքն ու հավաքների ազատության իրավունքը և մտնում է Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների չարաշահման դաշտ: Մասնավորապես նշվածը բխում է Թիվ R(97)20 հանձնարարականի 4 սկզբունքից, որի համաձայն ատելություն հրահրող խոսքի որոշ տեսակներ կարող են այն աստիճանի վիրավորել անհատներին կամ անհատների խմբերին, որ դուրս մղվեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով սահմանված խոսքի այլ տեսակների համար սահմանված պաշտպանության շրջանակներից: Սա տեղի է ունենում այն դեպքում, երբ ատելություն սերմանող խոսքը ուղղված է Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով:

Յուրաքանչյուր դեպքում ազատ արտահայտվելու իրավունքը սահմանափակելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրա նպատակն է հատուկ համոզմունքներ ու կարծիք ունեցող անձանց պաշտպանելը, այլ ոչ թե համոզմունքային համակարգերի պաշտպանությունը՝ քննադատությունից: Արտահայտվելու ազատության իրավունքից բխում է, որ անհրաժեշտ է հնարավորություն տալ, որպեսզի քննարկվեն, բաց բանավեճի առարկա հանդիսանան, նույնիսկ կոշտ ու անողջամիտ քննադատության ենթարկվեն համոզմունքային համակարգերը, կարծիքները և հաստատությունները քանի դեռ նման քննադատությունը չի վերաճում անհատի կամ անհատների խմբերին ուղղված ատելություն հրահրող խոսքի³¹: Այս մասով թիվ 1728 բանաձևում Վեհաժողովն ընդգծել է, որ պետական իշխանությունների կարևորագույն խնդիրը ոչ միայն միջազգային փաստաթղթերով երաշխավորված իրավունքների պաշտպանությունն է, այլև այնպիսի արտահայտություններից զերծ մնալը, որոնք կարող են հանգեցնել խտրականության կամ ատելության օրինականացման կամ խրախուսման: Ատելության քարոզման և հանցագործությունների կատարմանն աջակցման և խոսքի ազատության միջև սահմանը պետք է որոշվի հաշվի առնելով Եվրոպական դատարանի պրակտիկան:

Եվրոպական դատարանը Հենդիսայդան ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործով նշել է. «Արտահայտման ազատության իրավունքից օգտվողը կրում է պարտավորություններ և պատասխանատվություն»³²: Մույն պարտավորությունների և պատասխանատվության չափը կապված է կոնկրետ գործի հանգամանքներից և օգտագործվող տեխնիկական միջոցներից, իսկ իրականացումը հնարավոր է սահմանափակվի Կոնվենցիայի 10 հոդվածին համապատասխան:

Նշենք, որ ՀՀ քրեական օրենսգրքով ատելության խոսքի հասկացությունը տրված չէ, սակայն սահմանված է պատիժ ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելու, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունների կատարման համար /հոդված 226/: Ինչպես տեսնում ենք, հոդվածում ամրագրված չեն փոքրամասնությունների դեմ /կապված սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնորոշման հիմքի հետ/ կատարվող գործողությունների արգելքը արտահայտված ատելության հիմքով, ի հակասություն ԵԽ ՆԿ REC(2010)5 և R(97)20 հանձնարարականների: Ավելին, օրենսգրքի 63-րդ հոդվածը սահմանում է պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքները, որոնց մեջ նախատեսված է հանցանքն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության, այլ անձանց

³¹ http://www.foi.am/u_files/file/Ezrakacutyun.pdf

³² Հենդիսայդան ընդդեմ Մեծ Բրիտանիայի, 07.12.1976, էջ 25, 49 պարագրաֆ

իրավաչափ գործողությունների համար վրեժի շարժառիթներով կատարելը: Սույն հոդվածը տալիս է ատելության հիմքով ծանրացնող հանգամանքների սպառիչ ցանկ, որում ընդգրկված չէ սեռական կողմորոշման և գենդերային ինքնության հիմքը: Ի տարբերություն սրա՝ իրավահավասարության խախտման դիսպոզիցիան բաց է, չնայած որ չի սահմանում սեռական կողմորոշման և գենդերային ինքնության հիմքը, սակայն դրանում հիմքերի սահմանման չսպառումը հնարավորություն է ընձեռում չընդգրկած հիմքերի պաշտպանություն իրականացնել, այդ թվում հաշվի առնելով նաև ՄԻԵԴ պրակտիկան ու Կոնվենցիայի մեկնաբանությունները:

Նման պայմաններում, երբ օրենքով արգելված չէ ԼԳԲՏ անձանց վնաս պատճառելն ատելության խոսքի դրսևորմամբ, ինչպես նաև այդպիսի դրսևորումը չի դիտվում որպես արարքի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք, որպես սոցիալական առանձին խմբի անդամներ, ԼԳԲՏ անձինք դուրս են մնացել պաշտպանության դաշտից ընդհանրապես, դե իսկ հանցավորության կանխարգելման մասին խոսելն ավելորդ է:

Սույնի վերաբերյալ Խորհրդարանական Վեհաժողովի թիվ 1948/2013/ բանաձևի 9.1.7. կետով Վեհաժողովը հավասարության և խտրականության չթույլատրելիության համար կոչ է անում ընդունել քրեական օրենսդրություն անհանդուրժողականության հողի վրա սեռական կողմորոշման և գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունների պատասխանատվության մասին:

ԵՄ ՆԿ REC(2010)5 հանձնարարականը մասնակից պետություններին պարտավորեցնում է նորմատիվ ակտով սեռական **կողմորոշման կամ գենդերային ինքնության կանխակալ շարժառիթը որակել որպես ծանրացնող հանգամանք:**

Սույն հանձնարարականով ուշադրություն է դարձվել ատելության խոսքի դրսևորմանը **ինտերնետի կամ ինֆորմացիայի տարածման այլ ժամանակակից միջոցների կիրառմամբ:**

2003 թվականի հունվարի 28-ին ՀՀ-ը ստորագրել է Կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիային կից «Համակարգչային համակարգերի միջոցով կատարվող ռասիստական և քսենոֆոբիական բնույթի արարքների քրեականացման մասին» արձանագրությունը, որում նշված է. «Հաշվի առնելով Ինտերնետի ազդեցության աճը և դրանում «ատելության խոսք» օգտագործողների բացահայտման և պատասխանատվության ենթարկման բարդությունները՝ **մասնակից պետությունները պարտավոր են նորմատիվ-իրավական բազա ստեղծել և ապահովել** կիրառելիությունը ՁԼՄ-ների, Ինտերնետ ծառայությունների և սոցիալական ցանցերի նկատմամբ, հատկապես կապված ատելության խոսքի հետ, **որի շարժառիթը կողմորոշման և գենդերային ինքնության հիմքն է**»:

Հանձնարարականի հուշագրում այս մասով նշված է, որ պետությունները պարտավոր են՝

- ինտերնետային հանցագործությունների բացահայտման գործերում հաշվի առնել և քննարկել սեռական կողմորոշման և գենդերային ինքնության շարժառիթը,
- միջոցներ ձեռնարկել այն նյութերի տարածման դեմ, որոնք խրախուսում են ատելությունը կամ խտրականության այլ ձևերը լեսբուհիների, գեյերի, բիսեքսուալների և տրանսգենդերների նկատմամբ, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել պրովայդերների վերահսկողության մատչելիության դեմ ինտերնետ ցանցերում սպառնալիքների և վիրավորանքների պայքարելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքով կիբեռհանցագործությունների վերաբերյալ առանձին գլուխ նախատեսված չէ, իսկ համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ

ուղղված հանցագործությունների սահմանումը չի համապատասխանում վերոգրյալ ցուցումներին հետևյալ պատճառաբանությամբ.

- նախ տեղեկատվության օգտագործման, տարածման միջոցներն ամբողջությամբ չեն թվարկված, մասնավորապես նշված չեն սոցիալական ցանցերն ու բլոգները,

- դրանցում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնությա հիմքը որպես շարժառիթ չի նշվում,

- նշված շարժառիթը պետք է որակվի որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք:

Սույն հանձնարարականով և թիվ 1728 բանաձևով առանձնակի ուշադրություն է դարձվել աստեղության խոսքի հեղինակներին, կապված այն հանգամանքի հետ, որ այդ անձինք ունեն որոշակի ազդեցության ոլորտ և լծակներ, հետևաբար պարտավոր են գերծ մնալ որևէ հայտարարությունից, որը կարող է ընկալվել որպես աստեղության խոսքի արդարացում կամ հրահրում կամ քարոզում: Հատկապես այս պահանջն ուղղված է վերջիններիս հարաբերություններին ՋԼՄ-ների, արհմիությունների, քաղաքական, հասարակական կազմակերպությունների և հասարակության ելքային ներկայացուցիչներին: Սույնի վերաբերյալ վերոնշյալ հանձնարարականը պարտավորեցնում է մասնակից պետություններին բարձրացնել նրանց տեղեկատվության իրավունքը գերծ մնալու նման խախտումներից:

Իրենց հերթին ՋԼՄ-ները, օգտվելով իրենց իրավունքներից, նույնպես պետք է գերծ մնան աստեղության խոսքի հրահրումից ու խրախուսումից, ըստ այդմ Հանձնարարականը, կարևորելով նրանց մասնագիտական պրակտիկան և պատասխանատվությունը, որը նրանք կրում են, պարտավորեցնում է աջակցել հանդուրժողականության մշակույթի և բազմազանության տարածմանն ու զարգացմանը: Այս մասով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը արգելում է օրենքով սահմանված կարգով **գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող**, ինչպես նաև այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը:

Վերը բերված վերլուծություններից փաստենք, որ սույն օրենքը չի պաշտպանում ԼԳԲՏ անձանց իրավունքները ՋԼՄ ոլորտում, քանի որ աստեղության հիմքով և սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության շարժառիթներով հանցագործություններ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված չեն:

Սույն ուսումնասիրության ոլորտում ընդգծենք նաև, որ ԼԳԲՏ անձինք, ում նկատմամբ դրսևորվել է ոտնձգություն նշված շարժառիթով չունեն տուժողի կարգավիճակ ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրված և չեն կարող իրականացնել իրենց պաշտպանությունն արդյունավետորեն և պատշաճ կերպով, հետևաբար օգտվել արդար դատաքննության իրավունքից: Ավելին, վերջիններս չեն կարող պահանջել իրենց պատճառված բարոյական վնասի հատուցումը, հետևաբար չեն կարող այդ մասով ճանաչվել քաղաքացիական հայցվոր: Ի հավելումն տուժողի կարգավիճակի և քաղաքացիական հայցվորի կարգավիճակի մասին օրենսդրական նորմերի բացակայության՝ նշենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը երաշխավորում է անձի պատվին և արժանապատվությանը, գործարար համբավին պատճառված վնասի փոխհատուցումը, որը դրսևորվել է **վիրավորանքի և զրպարտության** միջոցով:

Սույն հոդվածի իմաստով վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու

նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է: Մինչդեռ ատելության խոսքից պաշտպանական ոլորտն ավելի բարձր է, ինչպես արդեն նշել ենք, այն բացառում է Կոնվենցիայի 10 և 11 հոդվածները, ուղղված է անձի Կոնվենցիայով երաշխավորված ցանկացած իրավունքի վերացմանը կամ սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան Կոնվենցիայիով նախատեսվածը: Ավելին, գրապարտությունը և վիրավորանքը ապաքրեականացվել են ՀՀ օրենսդրությամբ, ուստի սրանց պաշտպանության դաշտն ավելի թույլ է, իսկ ատելության հիմքով իրավախախտումները հանցագործություններ են, որոնք ոտնձգում են ավելի բարձր արժեքների դեմ:

Ատելության հիմքով ԼԳԲՏ անձանց դեմ ուղղված հանցագործությունները կանխակալ դրդապատճառներով հանգործություններ են: ԵԱԽԿ-ի կողմից մշակվել է ուղեցույց «Ատելության հիմքով հանցագործությունների մասին», որտեղ նշված է. «Ատելության հիմքով հանցագործություններն անհանդուրժողականության բռնի դրսևորումներ են և խորապես ազդում են ոչ միայն անմիջական գոհի, այլ նաև այն խմբի վրա, որի հետ գոհն ինքն իրեն նույնականացնում էր: Որևէ անձի ինքնությունը թիրախ դարձնելով՝ ատելության հիմքով հանցագործություններն ավելի մեծ վնաս են պատճառում, քան սովորական հանցագործությունները: **Անմիջական գոհը կարող է ստանալ մեծ հոգեբանական վնասվածքներ և խոցելիության ավելի մեծ զգացում, քանի որ նա չի կարող փոխել այն հատկանիշը, որը նրան գոհ է դարձրել**»³³:

Ելնելով սույն վերլուծությունից՝ փաստենք, որ ատելության հիմքով հանցագործությունների դեպքում, այդ թվում նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության դեմ ուղղված, օրենսդրորեն սահմանված չեն բարոյական վնասի փոխհատուցման չափեր :

Իհարկե, ՄԴՈ-1121 որոշմամբ³⁴ ՀՀ Սահմանդրությանը հակասող և անվավեր ճանաչվեց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետը այնքանով, որքանով բարոյական վնասը չէր դիտվում որպես վնասի տեսակ և չէր ապահովում բարոյական վնասի փոխհատուցման հնարավորություն, դրանով իսկ հնարավորություն տրվեց օրենսդիր մարմնին մշակել օրենք բարոյական վնասի ինստիտուտի մասին, այնուամենայնիվ, նույնիսկ այդ ինստիտուտի առկայության դեպքում սեռական կողմնորոշմամբ պայմանավորված հանցագործությունների օրենքով սահմանված չլինելու դեպքում հնարվոր չէ սահմանել դրանով պատճառված բարոյական վնասի չափերը :

Ելնելով վերոգրյալից՝ փաստենք, որ

1. միջազգային իրավունքով արգելվում է ատելության խոսքի դրսևորումը ԼԳԲՏ անձանց նկատմամբ՝ պայմանավորված նրանց սեռական կողմնորոշման հետ՝ անկախ օգտագործված արտահայտություններից,
2. խոսքի ազատության և ատելության խոսքի սահմանները փոփոխվում են ՄԻԵԴ պրակտիկային համապատասխան,

³³ Hate Crime Laws: A Practical Guide Հրատարակվել է ԵԱՀԿ Ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺԻՄԻԳ) կողմից www.osce.org/odihr

³⁴ <http://www.concourt.am/armenian/decisions/common/2013/pdf/sdv-1121.pdf>

3. ՀՀ օրենսդրությամբ ստեղծության հիմքով հանցագործությունն սեռական փոքրամասնությունների դեմ նախատեսված չէ, ի հակասություն ԵԽ ՆԿ REC(2010)5 և R(97)20 հանձնարարականների,
4. ՀՀ օրենսդրությամբ ստեղծության հիմքով սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության շարժառիթը՝ որպես ծանրացնող հանգամանք, նախատեսված չէ, որը հակասում է ԵԽՆԿ REC(2010)5 հանձնարարականին,
5. ՀՀ օրենսդրությամբ ինտերնետային հանցագործությունների ծանրացնող հանգամանք ստեղծության հիմքով սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության շարժառիթը նախատեսված չէ,
6. ՀՀ օրենսդրությամբ որպես ինտերնետային հանցագործությունների կատարման միջոց չեն նախատեսվել սոցիալական ցանցերն ու բլոգները, ի հակասություն Կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիային կից արձանագրության:

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

Ելնելով սույն աշխատությամբ կատարված ուսումնասիրություններից՝ վերհանված խնդիրներից, միջազգային ակտերի պահանջներից, որոնց միացել է ՀՀ-ը, առաջարկվում է՝

1. ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ և 140-րդ հոդվածներում կատարել փոփոխություն՝ հանելով «համասեռական գործողություններ» բառակապակցությունը

2. ՀՀ օրենսդրությամբ ամրագրել նորմեր ԼԳԲՏ հասկացությունների մասին

3. ՀՀ քրեակատարողական օրենսգրքում որպես ազատազրկվածների անջատ պահման հիմք նախատեսել խոշտանգման և սեռական ոտնձգության ենթարկման վտանգները

4. ամրագրել նորմեր ԼԳԲՏ զույգերի իրավական կարգավիճակի մասին

5. ՀՀ օրենսդրությամբ ԼԳԲՏ զույգերին տրամադրել «մերձավոր ազգական»-ի կարգավիճակ քաղաքացիական /կապված ժառանգության, վարձակալության և այլ իրավունքների ծագման հետ/, ընտանեկան և քրեական օրենսդրական կարգավորման բնագավառում

6. ընդունել օրենք տրանսսեքսուալ անձի կենսաբանական սեռը փոխելու մասին, դրա իրականացման անհրաժեշտ պայմանների և կարգի, դրա համար տրամադրվող ապահովագրման մասին, այլ նյութաիրավական և դատաիրավական առանձնահատկությունների մասին միջազգային իրավական նորմերին և ՄԻԵԴ նախադեպային իրավունքին համապատասխան

7. սահմանել դրույթ վիրահատությունից հետո տրանսսեքսուալի նոր սեռի ճանաչման մասին, որն իր մեջ ներառում է պաշտոնական և ոչ պաշտոնական փաստաթղթերում անվան փոփոխման և փոխված սեռի գրառման և այդ փաստաթղթերի տրամադրման մասին

8. միջոցներ ձեռնարկել առողջապահության ոլորտում ԼԳԲՏ անձանց նկատմամբ դրսևորված խտրականության վերացման համար կապված արյան տրամադրման արգելքի և նրանց ռիսկային խմբի մեջ մտցնելու հետ

9. ՀՀ քրեական օրենսգրքով ամրագրել աստելության խոսքի սահմանումը միջազգային պրակտիկային համապատասխան

10. Նախատեսել ԼԳԲՏ անձանց նկատմամբ աստելության հիմքով հանցագործության ամրագրում՝ պայմանավորված սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հետ

11. սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության շարժառիթը նախատեսել որպես պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք

12. կիրեռհանցագործությունների կատարման միջոց նախատեսել նաև սոցիալական ցանցերն ու բլոգները, իսկ որպես դրանց ծանրացնող հանգամանք՝ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության շարժառիթը

13. ընդունել առանձին օրենք ԼԳԲՏ անձանց իրավունքների մասին, նրանց դեմ դրսևորվող խտրականության դեմ պայքարի միջոցների մասին: